ՏԱՍԸ ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՈՒՂՂԱԾ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵԿԵՂԵՑՈՒՆ

ՓՈԼ ՎՈՇԵՐ

ՏԱՍԸ ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՈՒՂՂՎԱԾ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵԿԵՂԵՑՈՒՆ

ՏԱՍԸ ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՈՒՂՂԱԾ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵԿԵՂԵՑՈՒՆ

ՓՈԼ ՎՈՇԵՐ

Ten Indictments against the Modern Church, Paul Washer, Armenian
© 2022 by Paul Washer

Տասը մեղադրանք՝ ուղղված ժամանակակից եկեղեցուն,
Փոլ Վոշեր, հայերենով
© 2022, թարգմանված է անգլերենից

Հեղինակային իրավունքները պատկանում են
«2022 by Paul Washer»-ին

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի մասը չի կարող օգտագործվել կամ կրկնօրինակվել որևէ կերպ՝ առանց գրավոր թույլտվության:
Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են, եթե չկան այլ նշումներ:

Բովանդակություն

Հեղինակի աղոթքը VII

Ներածություն 1

1. Սուրբ Գրքի բավարար լինելու գործնական հերքում..... 9
2. Անգիտություն Աստծո վերաբերյալ 13
3. Մարդկային ախտերի բուժման ձախողում.....17
4. Հիսուս Քրիստոսի Ավետարանի չիմացություն.....23
5. Ոչ աստվածաշնչյան հրավեր դեպի Ավետարան 35
6. Եկեղեցու բնույթի չիմացություն.....47
7. Սիրով լի խրատի պակաս եկեղեցում..... 59
8. Լռություն զատման վերաբերյալ..... 65
9. Ընտանիքին վերաբերող սուրբգրային համարների փոխարինում.....71
10. Աստծո Խոսքով թերսնված հովիվներ..... 79

Հեղինակի աղոթքը

Հայր, գալիս եմ Քո առջև Քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով: Տեր, Դու գիտես ամեն բան: Բոլորը Քո առջև բաց գրքի նման են: Ո՞վ կարող է թաքցնել իր սիրտը Քո ներկայությունից և Քո աչքերից: Ամենախելացի մարդկանց գործերն էլ բացահայտված են Քեզ համար: Քո ամենագիտությունը չունի սահմաններ: Եվ եթե չլիներ Քո շնորհքը, ես բոլորից ավելի սարսափահար կլինեի: Սակայն կա շնորհք՝ առատ և փառահեղ, որը թափվել է ամենափոքր մարդու վրա և Քո մեծ փառքի մասին է վկայում: Հայր, փառք եմ տալիս և երկրպագում եմ Քեզ. շնորհակալ եմ ամենի համար, որ կաս, և ամենի համար, որ արել ես: Չկա Քեզ նմանը ոչ երկնքում, ոչ երկրի վրա, և ոչ էլ երկրի տակ: Դու ես Թագավորը, ուրիշը չկա: Դու ես Փրկիչը և այս փառքը ոչ մեկի հետ չես կիսում:

Հայր, Դու գիտես ինձ և գիտես, թե որքան ունեմ շնորհքիդ կարիքը: Ինչո՞ւ եմ այստեղ, եթե ոչ այն պատճառով, որ Դու կանչել ես մարդկանցից ամենափոքրին, եղբայրներից ամենաանարգին, որպեսզի Քո շնորհքով փոքրերը հաճախ սովորեցնեն

մեծերին: Իմ պարագայում միշտ այդպես է, և ես փառք եմ տալիս և երկրպագում եմ Քեզ:

Հայր, օգնի՛ր մեզ այսօր: Օգնի՛ր պերճախոսներին և փայլուն մտքի տեր մարդկանց: Թո՛ղ որ ճշմարտությունն առաջ մղվի: Թո՛ղ մարդիկ փոխվեն, որ Քո եկեղեցին առավել փառահեղ վիճակում լինի: Աղոթում եմ, որ թե՛ ինձ, և թե՛ լսողներին շնորհք տրվի շնորհքի տեղ, ողորմություն՝ ողորմության տեղ: Օգնի՛ր մեզ, Ասպվա՛ծ, և մեզ օգնություն կհասնի, և մենք կպարծենանք այդ օգնությամբ: Աղոթում ենք Հիսուսի անունով: Ամե՛ն:

Ներածություն

«Եվ Հոգին հայտնի ասում է, թե հետին ժամանակներում ոմանք հավատքից կհեռանան և մտիկ կտան մոլար ոգիների և դևերի վարդապետությունների»:

- Ա Տիմոթեոս 4.1

Մեծ արտոնություն է կանգնել և խոսել կամ գրել այնպիսի բաների մասին, ինչպիսիք են արթնությունը, բարեկարգումը և Աստծո գործերը Իր ժողովրդի ու մարդկանց մեջ: Այս համառոտ գրքում կկիսվեմ մեղադրական եզրակացությամբ: Եվ դա հույսի մեղադրանք է[1]:

Երբ աղոթում էի, թե ինչ պետք է փոխանցեմ ձեզ, մի

1 Այս գրքի նյութը սկզբնապես մատուցվել է հատուկ առիթով ներկայացված քարոզի տեսքով: Այդ քարոզը Սուրբ Հոգու միջոցով ուշագրավ ձևով օրինել է շատերի կյանքերն ամբողջ աշխարհում՝ անկեղծությամբ դարձի բերելով մարդկանց և վերադարձնելով նահանջածներին դեպի Աստված: Այս աշխատությունը այդ քարոզի լոկ սղագրությունը չէ: Փոփոխությունների մեծ մասն արվել է՝ բանավոր, քարոզչական խոսքը վերածելու գրավոր և առավել գրական խոսքի: Հիմնական նպատակն է եղել պահպանել քարոզչական ուժը՝ միևնույն ժամանակ հետևելով գրական խոսքի կանոններին և օգտվելով դրանցով պայմանավորված հնարավորություններից: Բոլոր վերանայումներն արված են՝ հարգելով քարոզչի խոսքի իմաստը, քարոզի հոգևոր միտումը և ամենից ավելի՝ Աստծուն, Ում Խոսքը հռչակվում է:

կարևոր եզրահանգում արեցի: Մեծ ծանրություն է դրված սրտիս. *մեզ արթնություն է պետք:* Մեզ արթնանալ է պետք, սակայն մենք չենք կարող ակնկալել, որ Սուրբ Հոգին կգա ու կմաքրի այն ամբողջ խառնաշփոթը, որը ստեղծել ենք: Աստծո Խոսքի միջոցով մեզ հստակ ուղղություն է տրված, թե ինչ է Նա արել Քրիստոսի միջոցով: Մենք գիտենք, թե ինչպես է Նա ցանկանում, որ ապրենք: Գիտենք, թե ինչպես է Նա ցանկանում, որ կազմակերպենք Իր եկեղեցին: Քիչ օգտավետ է այն, որ մարդիկ աղաղակում են Աստծո Հոգու արտաաստվածաշնչյան դրսևորումների համար, երբ մեր շուրջը խախտվում են պարզ աստվածաշնչյան սկզբունքները:

Կցանկանամ, որ իմանաք՝ սատանայից ու չար մարդկանցից շատ ջանք չի պահանջվում հակառակվելու արթնության համար աղոթողին, եթե այդ մարդը չի աշխատում նաև բարեկարգման ուղղությամբ: Մեզ տրված է ճշմարտությունը: Եվ մենք չենք կարող պարզապես անել այն, ինչը մեզ է ճիշտ թվում, իսկ հետո ակնկալել, որ Սուրբ Հոգին կգա ու կօրհնի մեր ջանքերը:

Երբ կարդում ենք Հին կտակարանը, տեսնում ենք, որ Մովսեսին տրվել էին շատ մանրամասն ցուցումներ այն մասին, թե ինչպես պետք է կառուցվեր Ուխտի տապանակը (տե՛ս Ելից 25-28 գլուխներ): Արդյո՞ք այդ ցուցումները տրվել էին հանուն Մովսեսի, թե՞ հանուն եկեղեցու: Այս հատվածից երևում է, որ Աստծո կամքը մասնահատուկ է: Մենք չպետք է կարծենք, թե կարելի է անտեսել Աստծո հայտնի կամքի նույնիսկ փոքրագույն տարրը:

Ես գիտեմ, որ տկար մարդ եմ, ով պայքարում է բազում

թուլությունների դեմ: Այդուհանդերձ, ունեմ մեղադրանք: Չեմ կարող կոչել դա իմ մեղադրանքը, քանի որ ո՞վ եմ ես, որ մեղադրանք ներկայացնեմ ինչ-որ մեկին: Չեմ համարձակվում կոչել դա Աստծո մեղադրանքը. ինչպե՞ս կարող եմ Նրա անունից խոսել: Սակայն կասեմ հետևյալը. երբ նայում եմ շուրջս՝ եկեղեցուն, և համեմատում եմ այն Սուրբ Գրքի հետ, ինձ հետապնդում է այն միտքը, որ որոշ բաներ պետք է փոխվեն:

Չեմ հավակնում լինել հաջորդ Մարտին Լյութերը, ում գրավոր աշխատությունները և քարոզները ոգեշնչում դարձան Բողոքական բարեկարգման համար և փոխեցին արևմտյան քաղաքակրթության[2] ընթացքը: Այն, ինչ հաջորդիվ գրել եմ, միտված չէ լինելու Վիթենբերգի[3] դռանը գամված իննսունհինգ թեզերի իրավահաջորդը:

Թո՛ւյլ տվեք մի զգուշացում անել: Այն, ինչ ասելու եմ, միգուցե բարկացնի որոշ ընթերցողների: Գուցե մեղադրեք ինձ մեծամտության մեջ: Գուցե չհավանեք այն ձևը, որով ներկայացնում եմ նյութը: Շատ անգամներ եմ եղել մեծամիտ և շատ անգամներ եմ ճշմարտությունը սխալ ներկայացրել: Սակայն, խնդրում եմ, թույլ մի՛ տվեք, որ իմ մեղքերն ու սխալներն արդարացում լինեն ձեզ համար: Ինքներդ ձեզ հետևյալ հարցն ուղղեք՝ արդյո՞ք այն, ինչ ասվում է, ճշմարիտ է՝ անկախ այն բանից, որ միգու-

---

2 Մարտին Լյութերն (1483-1546թթ.) ազգությամբ գերմանացի աստվածաբան էր, համալսարանի դասախոս և եկեղեցու բարեկարգող:

3 1517թ.-ի հոկտեմբերի 31-ին Լյութերը Գերմանիայի Վիթենբերգի ամրոց-եկեղեցու դարպասին էր ամրացրել Հռոմի կաթոլիկ եկեղեցու վարդապետությանը և գործելակերպերին ուղղված իննսունհինգ առարկությունները: Սա այն կարևոր իրադարձություններից էր, որը հանգեցրեց Բողոքական բարեկարգմանը:

ցե մատուցվում է սխալ սուրհանդակի կողմից:

Կլինեն նաև այնպիսիք, ովքեր կուրախանան իրենց լսածից և կցանկանան ասել «ամե՛ն»: Սակայն պետք է խնդրեմ, որ չտրվեք թանձր հաղթականությանը, քանի որ բոլորս ունենք մեղավորության մեր բաժինը: Եթե հասել եք հոգևոր հասունության որոշակի աստիճանի, ապա կասեմ ձեզ այն, ինչ իմ եղբայրն է ասել. «Որովհետև, ո՞վ է քեզ որոշում. ի՞նչ ունես դու, որ չես առել: Եվ եթե առել ես, ինչո՞ւ ես պարծենում չառածի պես» (Ա Կորնթ. 4.7): Ավելի լավ չէ՞ խոնարհությամբ երկրպագել Աստծուն:

Եթե երիտասարդ ծառայող եք, չեմ ցանկանա, որ այնպես տարվեք այս ճշմարտություններով, որ դրանցով ռմբակոծեք ձեր եկեղեցիները՝ առանց սիրո: Մինչև ձեր ծնկները չարնահոսեն, ոչ մի տեսակի բարեկարգում մի՛ սկսեք: Եթե տարեց ծառայող եք, տարիներ շարունակ ծառայել եք Տիրոջը, խնդրո՛ւմ եմ, որ մեծամիտ չգտնվեք: Ծեր հիմար թագավորը կարող է սովորել նույնիսկ իր ամենաթույլ ծառաներից:

Խնդրում եմ նաև հետևյալը՝ ամեն բան փոխելու խիզախություն ունեցեք, նույնիսկ եթե սա ձեր կյանքի վերջին օրն է: Այդկերպ կարող եք մտնել փառքի մեջ՝ իմանալով, որ փորձել եք աստվածաշնչյան բարեփոխում անել:

Ի հավելումն, կցանկանամ մի զգուշացում անել տարեցներին. խնդրում եմ, որ ուշադրությա՛մբ լսեք: Ես ծանոթ եմ Ա Տիմոթեոսի 5.1-ում գրված ցուցմանը, որ ծերին չպետք է հանդիմանեմ, այլ հորդորեմ՝ ինչպես հոր: Հենց այդպես էլ ցանկանում եմ դիմել ձեզ: Այս երկրում մեծ

արթնություն է տեղի ունենում, և ոչ միայն այս երկրում, այլև Եվրոպայում, Հարավային Ամերիկայում և շատ այլ վայրերում: Տեսնում եմ, թե ինչպես են երիտասարդները վերադառնում ժայռի մոտ, որից կտրվել էին: Կարդում են Չարլզ Սպերջեն[4] և Ջորջ Ուայթֆիլդ[5]: Լսում են Լեոնարդ Ռեյվենհիլին[6], Դ. Մարտին Լլոյդ Ջոնսին[7], Ա. Ու. Թոզերին[8] և Ջոն Վեսլիին[9]: Սա մեծ՝ գրեթե անհավատալի շարժ է: Միայն այն պատճառով, որ հայտնի լրատվամիջոցները կամ ժամանակակից ամսագրերը, ինչպիսին է *«Քրիստոնեությունն այսօր»*, չեն բացահայտել, թե ինչ

---

4 Չարլզ Հ. Սպերջենը (1834-1892թթ.) ազգությամբ անգլիացի ազդեցիկ մկրտական ծառայող էր, ով ամեն շաբաթ Լոնդոնի մետրոպոլիտենի աղոթարանում քարոզում էր վեց հազար մարդու: Նրա հավաքագրած քարոզներից երեք հատոր գիրք է կազմվել:

5 Ջորջ Ուայթֆիլդը (1714-1770թթ.) տասնութերորդ դարի ամենահայտնի ավետարանիչն ու շրջագայող քարոզիչն էր, ում միջոցով Աստված մեծապես գործում էր Անգլիայում և Ամերիկայի գաղութներում Մեծ արթնության ժամանակ:

6 Լեոնարդ Ռեյվենհիլը (1907-1994թթ.) անգլիացի քրիստոնյա քարոզիչ և հեղինակ էր, ով կենտրոնացած էր այնպիսի թեմաների վրա, ինչպիսիք են աղոթքը և արթնությունը: Նա մարտահրավեր էր նետում ժամանակակից եկեղեցուն նմանվելու առաջին դարի եկեղեցուն, որի մասին գրված է Գործք Առաքելոցում:

7 Դեյվիդ Մարտին Լլոյդ-Ջոնսը (1899-1981թթ.) հայտնի քարոզիչ էր Ուելսից: Բժշկական կրթությունը բարեհաջող ավարտելուց հետո շարունակել է կյանքը՝ որպես բժիշկ, սակայն Աստված կանչել է նրան՝ քարոզելու Ավետարանը: Հայտնի է իր քրիստոսակենտրոն բացատրական քարոզներով:

8 Այդեն Ուիլսոն Թոզերը (1897-1963թթ.) ամերիկացի քրիստոնյա էր և Միսիոներական դաշինքի հովիվ, քարոզիչ ու հեղինակ: Նա հայտնի է իր խորն անձնական բարեպաշտության և աղոթքի կյանքով: Հաճախ մակերեսայնությունից և աշխարհի հետ փոխզիջումների գնալուց ապաշխարելու մարտահրավեր է նետել ժամանակակից եկեղեցուն:

9 Ջոն Վեսլին (1703-1791թթ.) անգլիկան ծառայող էր և աստվածաբան: Մեծապես նրան և նրա եղբայր Չարլզին է վերագրվում անգլիական մեթոդիստական շարժման հիմնումը, որը սկսվել է, երբ նա Ջորջ Ուայթֆիլդի նման քարոզել է բացօթյա տարածքներում:

է տեղի ունենում, չի նշանակում, որ ոչինչ տեղի չի ունենում: Կցանկանամ՝ իմանաք, որ տասնհինգ տարի առաջ չէի էլ կարող երազել, որ կտեսնեմ այն արթնությունը, որը տեսնում եմ այսօր՝ ոչ թե իմ ծառայության միջոցով, այլ նրանով, ինչ Աստված է անում՝ առանց որևէ մեկիս ծառայության:

Տեսել եմ, թե ինչպես են Նիդերլանդներում հազարավոր երիտասարդներ հռչակում՝ «պետք է փոփոխություններ տեղի ունենան», և ամբողջ գիշեր աղոթքով աղաղակում են, որ ստանան Աստծո զորությունը և Սուրբ Գրքի ճշմարտությունը: Տեսել եմ, թե ինչպես են Հարավային Ամերիկայում մարդիկ ընդունում, որ իրենց վրա մեծ ազդեցություն են ունեցել Ամերիկայից եկող հոգեբանությունն ու ավետարանչությանը վերաբերող բազմապիսի մակերեսային երևույթները: Իսկ այժմ նրանք լացելով և կոտրված վերադառնում են և ճշմարտապես ավետարանում իրենց եկեղեցիներին: Եղել եմ Միացյալ Նահանգների քաղաքներից մեկում, որտեղ մինչև առավոտյան ժամը երկուսը-երեքը աստվածաբանություն էինք քննարկում մի երիտասարդ աֆրոամերիկացու հետ, ում Աստված կանչել է քարոզելու ավելի շատ, քան որևէ մեկը կարող է պատկերացնել: Արթնություն է տեղի ունենում:

Ցավով եմ ասում, որ քառասունն անց մարդկանց մեծ մասը գաղափար չունի այս արթնության մասին: Շատ երիտասարդներ վերադառնում են նախորդ դարերի մեծ ուսուցիչներին: Նրանք վերադառնում են հին ճանապարհներին, այն ճշմարտություններին, որոնք բազմիցս արթնություն են բերել այս աշխարհին: Այդ երիտասարդ-

ներից շատերը հենց այդպիսին են՝ պարզապես երիտասարդ: Նրանք գնում են իրենց առաջնորդների մոտ և ասում. «Տեսեք, թե ինչ ենք բացահայտել: Տեսեք, թե ինչ է տեղի ունեցել Ուելսում[10]: Տեսեք, թե ինչ է տեղի ունեցել Աֆրիկայում[11]: Ապա այստեղ նայեք: Ապա այնտեղ նայեք: Նայեք այս ուսմունքին: Պարզապես հրաշալի է»: Եվ այսօրվա հասուն տարիքով մարդկանց մեծ մասը կամ մեջքով է շրջվում, կամ էլ ասում է. «Դա ոչ մի բանով չի տարբերվում նրանից, ինչ ես արդեն քսանհինգ տարի քարոզում եմ»: Մինչդեռ, իրականում, դա կարող է մեծապես տարբերվել նրանից, ինչ նրանք քարոզել են վերջին քսանհինգ տարիների ընթացքում: Ուստի, մենք պետք է շատ զգույշ լինենք հասկանալու, որ Աստված գործ է անում: Հիշեք, որ «Նա, Ով ձեզանում սկսեց այս բարի գործը, կկատարի էլ» (Փիլիպ. 1.6):

Շատ մարդիկ կարծում են, թե աղոթքով արթնություն են «բերելու»: Այլ մարդիկ էլ ասում են. «Արթնությունը կգա՝ անկախ այն բանից՝ կաղոթեք, թե՞ ոչ»: Ես այդ ճամբարներից ոչ մեկին չեմ պատկանում: Սակայն մեկ բան գիտեմ. երբ տեսնում եմ, որ ամբողջ աշխարհում տղամարդիկ, կանայք և երիտասարդներն աղոթում են արթնության համար, դրանք արթնության առաջին պտուղ-

---

10 Օրինակ՝ 1904-1905թթ.-ի Ուելսի մեծ արթնությունը, որը սկսվել է Էվան Ռոբերտսի (1878-1951թթ.) առաջնորդությամբ: Վերջինս քսանվեցամյա ածխահան էր, ով պատրաստվում էր ծառայության: Արթնությունը մեկ տարի չտևեց, սակայն այդ ընթացքում հարյուր հազար մարդ դարձի եկավ, և շատ եկեղեցիներ վերադարձան աստվածաշնչյան հավատքին:

11 Այստեղ խոսքը վերաբերում է մերձսահարայական Աֆրիկայի ավետարանչությանը, որը սկսվել է 1800-ականների գաղութատիրական ժամանակաշրջանից և շարունակվում է առայսօր՝ թե՞ օտարերկրյա միսիոներների, և թե՞ տեղի եկեղեցիների միջոցով:

ներն են: Եվ կարող եմ հենվել այն փաստի վրա, որ առաջին պտուղ տվողը նաև ամբողջական բերքը կտա:

Այս ամենի լույսի ներքո կցանկանամ անդրադառնալ տասը մեղադրանքներին և ներկայացնել բաներ, որոնք, հավատացած եմ՝ պետք է փոխվեն ժամանակակից եկեղեցում:

1

Սուրբ Գրքի բավարար լինելու գործնական հերքում

«Եվ որ մանկությունից դ Սուրբ գրքերը գիտես, որ կարող են քեզ իմաստուն անել փրկության համար այն հավատքի ձեռքով, որ Քրիստոս Հիսուսում է: Ամեն Գիրք Աստվածաշունչ է և օգտակար՝ վարդապետության և հանդիմանության և ուղղելու և արդարությամբ խրատելու համար. որ Աստծո մարդը կատարյալ լինի բոլոր բարի գործերի համար պատրաստված»:

– Բ Տիմոթեոս 3.15-17

Անցյալ տասնամյակների ընթացքում ուժեղ պայքար էր սկսվել այն բանի շուրջ, թե արդյո՞ք Սուրբ Գիրքը Աստծո կողմից է ներշնչված: Ձեզնից ոմանք չեն մասնակցել այդ պայքարին, սակայն առավել ազատական հարանվանություններից շատերը վստահաբար մասնակցել են: Մենք պայքարում էինք Աստվածաշնչի համար:

Սակայն այստեղ մի խնդիր կա: Երբ դուք՝ որպես ժողովուրդ, հավատում եք, որ Աստվածաշունչը Աստծո կող-

մից ներշնչված է, դա պայքարի միայն կեսն է: Հարցադրումը լոկ այն չէ՝ արդյո՞ք «Աստվածաշունչը ներշնչված է Աստծո կողմից, արդյո՞ք այն Աստծո անսխալական Խոսքն է»: Կարևոր հարցը, որը հետևում է դրան, սա է. «Արդյո՞ք Աստվածաշունչը բավարար է, թե՞ հարկավոր է դիմել, այսպես կոչված, ամեն հասարակական գիտության կամ մշակութային ուսումնասիրության՝ հասկանալու համար, թե ինչպես պետք է կազմակերպել եկեղեցին»: Սա է գլխավոր հարցը: Ըստ իս՝ հասարակական գիտությունները գերակայություն են ստացել Աստծո Խոսքի նկատմամբ այնպես, որ մեզնից շատերը չեն էլ նկատել: Դա այնպես է սողոսկել մեր եկեղեցիներ, մեր ավետարանչության և մեր միսիոլոգիայի մեջ, որ այն, ինչ անում ենք, այլևս դժվար է կոչել «քրիստոնեական»: Հոգեբանությունը, մարդաբանությունը և սոցիոլոգիան սկսել են առաջնային ազդեցություն ունենալ եկեղեցիների վրա:

Շատ տարիներ առաջ, երբ հոգևոր ճեմարանում էի սովորում, հիշում եմ, թե ինչպես մի դասախոս ներս մտավ և գրատախտակին ոտնահետքեր նկարեց: Գրատախտակով մեկ դրանք նկարելուց հետո նա շրջվեց դեպի մեզ և ասաց. «Այս հաստատության միջանցքներով քայլում է Արիստոտելը: Զգուշացե՛ք, ես նրա ոտնաձայներն ավելի պարզ եմ լսում, քան Պողոս առաքյալի, նրա հետ եղող Հոգով լցված մարդկանց, նույնիսկ՝ հենց Տեր Հիսուս Քրիստոսի ոտնաձայները»:

Մենք կարծում ենք, թե Աստծո մարդը կարող է գլուխ հանել եկեղեցու կյանքի որոշ փոքրիկ, սահմանափակ բնագավառներից, սակայն երբ բանը հասնում է բարդ իրավիճակներին, հարկավոր է դիմել սոցիալական փորձագետներին: Սա բացարձակ սուտ է: Աստծո Խոսքը հռչակում է, որ

նրանք տրված են՝ «Որ Աստծո մարդը կատարյալ լինի բոլոր բարի գործերի համար պատրաստված» (Բ Տիմոթ. 3.17): Աստվածաշնչով, ինչպես հարկն է, զինված ենք ամեն բանի համար, ինչ մեզնից կարող է պահանջվել:

Ինչ կապ ունի Երուսաղեմը Հռոմի հետ: Իսկ ինչ կապ ունենք մենք այդ ժամանակակից հասարակական գիտությունների հետ, որոնք իրականում ստեղծվել են՝ որպես ապստամբություն Աստծո Խոսքի դեմ: Ինչպե՞ս է պատահում, որ ավետարանչությունը, միսիան և, այսպես կոչված, եկեղեցու աճը ավելի շատ ուղղորդվում են մարդաբանի, հասարակագետի և «Ուոլ Սթրիթի» ուսանողի կողմից (ովքեր մեծապես տեղ են տալիս մշակութային միտումներին), քան Աստծո Խոսքով: Մեր եկեղեցու գործունեությունն ամբողջությամբ պետք է հիմնված լինի Աստծո Խոսքի վրա: Միսիայի բոլոր աշխատանքները պետք է հիմնված լինեն Աստծո Խոսքի վրա:

Մեր միսիոներական գործունեությունը, եկեղեցական գործունեությունը և ամեն բան, որ անում ենք, պետք է ուղղորդված լինի աստվածաբանի և Աստվածաշունչը մեկնողի կողմից՝ մարդու, ով բացում է Աստվածաշունչը և միայն մեկ հարց ուղղում. «Ո՞րն է Քո կամքը, Աստվա՛ծ»: Մենք չպետք է մեր հարցաշարերն ուղարկենք մարմնավոր մարդկանց՝ իմանալու, թե ինչ եկեղեցի են ցանկանում հաճախել: Եկեղեցին պետք է նախատեսված լինի Աստծուն անկեղծ փնտրողների համար, սակայն պետք է հիշել նաև, որ կա միայն մեկ Փնտրող: Նրա անունն է Աստված: Եթե ցանկանում եք հարմար լինել որևէ մեկի համար, եթե ցանկանում եք հարմարվել որևէ մեկին, ապա հարմարվե՛ք Նրան ու Նրա փառքին, նույնիսկ եթե մյուսները մերժում են դա: Մենք կանչված չենք կայսրություններ կառուցելու:

Կանչված չենք մարդկանց կողմից ընդունելի լինելու: Մենք կանչված ենք Աստծուն փառավորելու: Եվ եթե դուք ցանկանում եք, որ եկեղեցին լինի այլ բան, քան տարբերվող մարդկանց խումբ, ովքեր նշանավորվում են սրբությամբ և Աստծո պատկանելիությամբ, ապա դուք ցանկանում եք մի բան, որն Աստված չի ցանկանում:

Լսե՛ք, թե ինչ է ասում Եսային. «Եվ երբ որ ձեզ ասեն՝ հարցրե՛ք մեռելահարցուկներին և վհուկներին և փսփսողներին ու քրթմնջողներին...» (Եսայի 8.19): Սա կարող է լինել հասարակագետների և եկեղեցու աճի գիտակների լավ նկարագիրը: Յուրաքանչյուր երկու կամ երեք տարին մեկ նրանց բոլոր կարևոր տեսությունները փոխվում են: Նրանք նոր գաղափար են ծնում այն մասին, թե ով է մարդը, և ինչպես ուղղել նրան, ինչ է եկեղեցին, և ինչպես աճեցնել այն: Յուրաքանչյուր երկուսից երեք տարին մեկ նոր տարօրինակություն է ի հայտ գալիս այն մասին, թե ինչը կարող է բարձրացնել եկեղեցին աշխարհի աչքերում: Ոչ այնքան վաղ անցյալում եկեղեցու աճի ամենաճանաչված փորձագետներից մեկը պարզել է, որ իր բոլոր տեսությունները լիովին սխալ են եղել: Եվ փոխանակ ծնկների վրա, կոտրված և լաց լինելով՝ մարդկանց ուղղեր դեպի Սուրբ Գիրքը, նա մեկ այլ մարդածին տեսություն էր ողջունում:

Նման ուսուցիչները հստակ խոսք չեն ասում: Եսային ասում է. «Չէ՞ որ ժողովուրդը պետք է իր Աստծուց հարցնի. կենդանիների համար մեռածների՞ն դիմի: Օրենքին ու վկայությանը դիմե՛ք, եթե նրանք չխոսեն այս խոսքի համեմատ, նրանք արշալույս չունեն»: Արդյո՞ք պետք է մենք՝ եկեղեցականներս՝ քարոզիչներս, հովիվներս, քրիստոնյաներս, գնանք և խորհրդակցենք հոգևորապես մեռածների հետ այն մարդկանց անունից, ում Սուրբ Հոգին կենդանացրել է: Բնավ՝ ո՛չ:

2

Անգիտություն Աստծո վերաբերյալ

«Բայց Աստված, տգիտության ժամանակներն անտես անելով, հիմա մարդկանց պատվիրում է ամենին ամեն տեղ ապաշխարել»:

– Գործք Առաքելոց 17.30

Երբեմն ինձ հրավիրում են քարոզել Աստծո հատկանիշների մասին: Ես հաճախ պատասխանում եմ. «Եղբայրս, լավ մտածե՞լ ես այդ մասին»:

Ինձ ասում են՝ ի՞նչ նկատի ունես:

«Այն թեման, որի մասին ցանկանում ես, որ ուսմունք տամ քո եկեղեցուն, բավականին հակասական է»:

«Ի՞նչ նկատի ունես՝ հակասական ասելով: Խոսքն Աստծո մասին է: Մենք քրիստոնյաներ ենք: Սա եկեղեցի է: Ի՞նչը կարող է հակասական լինել»:

Ես ասում եմ. «Թանկագի՛ն հովիվ, ահա թե ինչ կասեմ: Երբ սկսեմ ձեր անդամներին սովորեցնել Աստծո արդարության, Նրա ինքնիշխանության, բարկության,

գերակայության և փառքի մասին, ձեր եկեղեցու ամենալավ և ամենահին անդամներից ոմանք կասեն հետևյալը. «Դա *իմ* Աստվածը չէ: Ես երբեք չէի կարողանա սիրել այդպիսի Աստծո»: Ինչո՞ւ. որովհետև նրանք իրենց սեփական մտքում աստված են ստեղծել և սիրում են այն, ինչ ստեղծել են»:

Ահա թե ինչ է ասում Աստծո Խոսքը.

> «Այսպես է ասում Տերը. «Իմաստունը իր իմաստությունով չպարծենա, և զորավորը իր զորությունով չպարծենա, հարուստը իր հարստությունով չպարծենա. այլ սրանով պարծենա, ով որ պարծենում է, թե հասկանում և ճանաչում է Ինձ, որ Ես եմ Տերը, որ երկրի վրա ողորմություն, իրավունք և արդարություն եմ անում, որ Ես սրանց եմ հավանում,- ասում է Տերը»» (Երեմիա 9.23,24):

> «Այս բաներն արիր դու, և Ես լուռ մնացի. կարծեցիր թե Ես էլ քեզ նման եմ: Բայց կհանդիմանեմ քեզ և քո աչքի առջև կդնեմ: Մի՛տք արեք այս, ո՛վ Աստծուն մոռացողներ, միգուցե Ես հափշտակեմ, և ոչ ոք չլինի, որ փրկի» (Սաղմոս 50.21,22):

Ո՞րն է խնդիրը: Կա Աստծո ճանաչողության պակաս: Շատերը լսում են սա և մտածում. «Աստծո հատկանիշների և աստվածաբանության մասին խոսելը ոչ մի գործնական կիրառություն չունի»:

Ինքներդ ուշադի՛ր լսեք ձեր ասածը. իսկապե՞ս կարծում եք, որ Աստծո ճանաչողությունը չունի ոչ մի գործնական կիրառություն: Գիտե՞ք, թե ինչու են ձեր քրիստոնեական գրախանութները լեցուն ինքնօգնության մասին

գրքերով: Պատճառն այն է, որ մարդիկ չեն ճանաչում իրական Աստծուն: Արդյունքում նրանց տրվում են ամեն տեսակի դատարկ մարմնական միջոցներ, որպեսզի վերջիններս կարողանան բնազդաբար քայլել: «Արթուն կացեք արդարությամբ և մեղք մի՛ գործեք. որովհետև մի քանիսն Աստծո մասին տգետ են. սա ձեզ ամաչեցնելու համար եմ ասում» (Ա Կորնթ. 15.34): Ինչո՞ւ է մեղքը սանձարձակվում նույնիսկ Աստծո մարդկանց շրջանում: Պատճառն Աստծո ճանաչողության պակասն է:

Ե՞րբ եք վերջին անգամ Աստծո հատկանիշներին նվիրված համաժողովի մասնակցել: Որպես հովիվ՝ ե՞րբ եք վերջին անգամ ամիսներ շարունակ սովորեցրել այն մասին, թե ով է Աստված: Եկեղեցական ուսմունքների ո՞ր մասն է այսօր առնչվում Աստծո Ով լինելուն: Հոսանքին համընթաց գնալը, այսինքն՝ մյուսներին հետևելը հեշտ է: Իսկ հետո՝ մեկ օր այսպիսի խոսքեր ես լսում ու հասկանում, որ չես էլ հիշում՝ վերջին անգամ երբ է որևէ մեկը սովորեցրել Աստծո հատկանիշների մասին: Իսկ հետո զարմանում ենք, որ այնպիսին ենք, ինչպիսին կանք:

Նրան ճանաչելը՝ սա է ամեն բանի իմաստը: Նրան ճանաչելը հավիտենական կյանք է: Հավիտենական կյանքը չի սկսվում այն պահից, երբ ներս եք մտնում փառքի դարպասներից: Հավիտենական կյանքը սկսվում է դարձի գալու պահից: Հավիտենական կյանքն Աստծուն ճանաչելն է: Ի՞նչ եք կարծում՝ մի ամբողջ հավիտենություն հիացնելո՞ւ է ձեզ, երբ քայլեք ոսկե փողոցներով: Միակ բանը, որը թույլ չի տա խելագարվեք հավիտենության մեջ, այն է, որ այնտեղ կա Մեկը, Ում փառքն անվերջանալի է, և դուք հավերժական հավիտենություն եք անց-

կացնելու՝ փորձելով ճանաչել Նրան, գտնել Նրան, սակայն երբեք չեք կարողանալու ձեր ձեռքերով պարփակել նույնիսկ Նրա լեռան ստորոտը:

Սկսե՛ք հիմա: Այնքան բաներ կան, որ պետք է իմանաք և անեք, այնքան գրքեր կան, որ պետք է կարդաք: Վերցրե՛ք Աստծո մասին մի լավ գիրք, վերցրե՛ք ձեր Աստվածաշունչը և ուսումնասիրե՛ք, որպեսզի ճանաչեք *Նրան*, որպեսզի իսկապես ճանաչեք ճշմարիտ և կենդանի Աստծուն:

Այս ամենի պատճառով կասեի, որ մի կողմից նույնիսկ լավ կլիներ, այսպես կոչված, որոշ եկեղեցիներում չանցկացնել կիրակնօրյա առավոտյան ծառայություններ: Կիրակի առավոտները երբեմն ամբողջ շաբաթվա ամենամեծ կռապաշտության ժամերն են, քանի որ մարդիկ չեն երկրպագում միակ ճշմարիտ Աստծուն: Մարդկանց մեծ բազմություն երկրպագում է մի աստծո, որին ստեղծել են իրենց սրտերում, իրենց մարմնի օգնությամբ, սատանայական միջոցներով, աշխարհիկ խելքով: Նրանք ստեղծել են իրենց նման աստծո՝ մի աստծո, որն ավելի շատ նման է Զմեռ պապին, քան Եհովային: Մենք չենք կարող ունենալ Տիրոջ երկյուղը, եթե չենք ճանաչում Տիրոջը:

3

Մարդկային ախտերի բուժման ձախողում

«Ինչպես որ գրված է, թե՝ արդար չկա, մեկն էլ չկա: Չկա իմացող, չկա Աստծուն խնդրող. ամենքը խոտորվեցին, միասին անպիտան եղան. չկա բարություն անող, նույնիսկ մեկն էլ չկա»:

– Հռոմեացիների 3.10-12

Հռոմեացիներին ուղղված թուղթը Աստվածաշնչի իմ ամենասիրելի գրքերից է: Այն համակարգված աստվածաբանություն չէ: Այդուհանդերձ, եթե Աստվածաշնչի գրքերից որևէ մեկը համարվեր համակարգված աստվածաբանություն, ապա Հռոմի եկեղեցուն ուղղված նամակը ամենամոտը կլիներ դրան: Հրաշալի է այն, որ այս գրքի առաջին երեք գլուխներում Պողոսը ջանում է հանդիմանել բոլորին, սակայն հանդիմանությունը նրա աստվածաբանության ամենամեծ *«summum bonum»*-ը

չէ, այսինքն՝ ամենամեծ ու գլխավոր բարիքը չէ: Հանդիմանությունը նրա վերջնանպատակը չէ: Մեղքը հանդիմանելու նրա ջանքերը՝ իր ընթերցողներին փրկության բերելու միջոց է, քանի որ մարդիկ պետք է ինքնագիտակցման գան, որպեսզի կարողանան հանձնվել Աստծուն: Հարկավոր է ընկած մարդու ամբողջ հույսը կտրել մարմնականից, որպեսզի հնարավոր լինի բերել նրան Աստծո մոտ:

Սա կարևոր է ամեն բանի մեջ, սակայն հատկապես կարևոր է ավետարանչության մեջ: Երբ քսանմեկ տարեկան էի և նոր էի կանչվել քարոզելու, մեկ անգամ մտա Կենտուկի նահանգի Փադուկա քաղաքի մի հին խանութ, որտեղ քարոզիչներին կոստյումները կես գնով էին վաճառում: Գրեթե հիսուս-վաթսուն տարի շարունակ այդպես էին անում: Երբ խանութում էի, հանկարծ դուռը բացվեց: Այնուհետև լսեցի դռան փակվելու զանգը. ներս էր մտել մի տարեց: Անունը չիմացա, սակայն ուղիղ ինձ նայելով՝ առաջ էր քայլում, նա ասաց. «Երիտասա՛րդ, դու կանչված ես քարոզելու, այնպես չէ՞»:

«Այո՛, պարո՛ն»,- ասացի:

«Ես էլ եմ քարոզել: Աստծո Հոգին իջնում էր, և մարդիկ փրկվում էին»,- պատասխանեց նա:

«Խնդրո՛ւմ եմ, պատմե՛ք ինձ այդ մասին, պարո՛ն»,- ասացի ես:

«Դա բոլորովին նման չէր այսօրվա ավետարանչությանը: Մենք երկու, երեք շաբաթ քարոզում էինք, սակայն մեղավոր մարդկանց չէինք կանչում խորանի մոտ: Հերկում ու հերկում էինք մարդկանց սրտերի հողը, մինչև

որ Սուրբ Հոգին սկսում էր աշխատել և կոտրել նրանց սրտերը»,- պատասխանեց նա:

«Պարո՛ն, իսկ ինչպե՞ս էիք իմանում, որ Սուրբ Հոգին կոտրում էր նրանց սրտերը»:

«Թո՛ւյլ տուր մի օրինակով բացատրել: Մի քանի տասնամյակ առաջ էր, մտա մի խանութ՝ կոստյում գնելու: Մի մարդ ինձ երեսուն դոլար էր տվել՝ ասելով. «Քարոզի՛չ եղբայր, վաղը գնացեք և ձեզ համար կոստյում գնե՛ք»: Երբ մտա խանութ, երիտասարդ աշխատակիցը, ով հսկում էր խանութը, շրջվեց և բացականչեց. «Ո՞վ կարող է փրկել ինձ պես չար մարդուն»: Ես գիտեի, որ Աստծո Հոգին իջել էր այդ վայրում»:

Այսօր այնքան քարոզիչներ են պարզապես մտնում եկեղեցաշենք, մարդկանց հետ զրուցում, երեք բացահայտող հարցադրում անում, այնուհետև հարցնում, թե արդյո՞ք ուզում են մի աղոթք անել և Հիսուսին իրենց սրտի մեջ հրավիրել: Այդկերպ մենք դժոխքի կրկնակի որդիներ ենք պատրաստում, ովքեր երբեք չեն բացվի Ավետարանի համար՝ այն կրոնավոր ստի պատճառով, որը մենք՝ դավանանքով ավետարանականներս, բաց ենք թողել մեր բերանից:

Երբ մեղքի հետ մակերեսայնորեն ենք վարվում, Սուրբ Հոգու դեմ ենք դուրս գալիս: Նրա մասին ասվում է, որ «Նա երբ որ գա, աշխարհին կհանդիմանի մեղքի համար...» (Հովհ. 16.8): Այսօր կան շատ հայտնի քարոզիչներ, ում ավելի շատ հուզում է ձեզ համար «լավագույն կյանք ապահովելը հիմա», քան ձեր հավիտենական ճակատագիրը: Նրանց հոգը չէ այն փաստը, որ իրենց քարոզներում մեղքի մասին չեն խոսում: Կարող եմ ասել,

որ Սուրբ Հոգին նրանց ծառայության հետ առնչություն չունի. եթե նույնիսկ ունի, ապա միայն այն առումով, որ դրան դեմ է գործում: Ինչո՞ւ. քանի որ որքան էլ մարդն ասի, որ իր ծառայությունը չի առնչվում մարդկանց մեղքերի հետ, Սուրբ Հոգու ծառայությունը առնչվում է դրա հետ: Սուրբ Հոգու առաջնային ծառայությունն է գալ և հանդիմանել աշխարհի մեղքը: Եթե ապականված վիճակում գտնվող մարդու հետ հատուկ, ջերմեռանդ և սիրով լի առերեսում չի իրականացվում, ապա Սուրբ Հոգին նույնիսկ այդ աշխատանքին մոտ չէ:

Մենք խաբեբաներ ենք, եթե մարդու ախտին թեթև ենք մոտենում, ինչպես Երեմիայի օրերի հովիվները. «Եվ իմ ժողովրդի աղջկա վերքը բժշկում են թեթև կերպով, ասելով՝ խաղաղություն, խաղաղություն. քանի որ խաղաղություն չկա» (Երեմիա 6.14):

Եվ սա անելով՝ ոչ միայն խաբեբա ենք, այլև՝ բարոյազուրկ: Նման ենք բժշկի, ով խախտում է Հիպոկրատի երդումը, քանի որ չի ցանկանում վատ լուր հայտնել մարդուն: Գուցե մտածում է, որ այդ լուրի պատճառով հիվանդը կբարկանա իր վրա կամ կտխրի, ուստի չի ասում այն նորությունը, որն առաջնային անհրաժեշտություն է վերջինիս կյանքը փրկելու համար:

Լսում եմ, թե ինչպես են այսօրվա քարոզիչներն ասում. «Ո՛չ, ո՛չ: Դու չես հասկանում: Մեր մշակույթը նման չէ այն մշակույթին, որին իրենց խոսքն էին ուղղում Ջորջ Ուայթֆիլդը և Ջոնաթան Էդվարդսը[1]: Մենք այնքան

1 Ջոնաթան Էդվարդսը (1703-1758թթ.) ամերիկյան հարանվանական քարոզիչ էր և ավետարանական աստվածաբան: Հայտնի է Մեծ արթնության ժամանակ իր քարոզչությամբ՝ Ջորջ Ուայթֆիլդի հետ:

ամուր և ուժեղ չենք, որքան նրանք էին. մենք կոտրված ենք: Մեր ինքնագնահատականը նրանց նման բարձր չէ: Մենք թույլ ենք. չենք կարող դիմանալ նման քարոզների»: Երբևէ ուսումնասիրե՞լ եք այդ մարդկանց կյանքերը: Նրանց մշակույթը ևս չէր կարող դիմանալ նրանց քարոզչությանը: Ոչ ոք երբևէ ունակ չի եղել դիմանալու Ավետարանի քարոզչությանը: Լսողները կա՛մ կատաղությամբ դեմ են կանգնում, կա՛մ դարձի գալիս: Ասում եք, թե իբր մեր ինքնագնահատականը բավականաչափ բարձր չէ, մինչդեռ մեր աշխարհը ողողված է ինքնագնահատականի նողկալի ախտով: Մեր մեծագույն խնդիրն այն է, որ մեր անձերը ավելի ենք գնահատում, քան Աստծուն:

Մենք գողեր ենք, եթե մեղքի մասին բավականաչափ չենք խոսում: Այս առավոտյան ո՞ւր անհետացան բոլոր աստղերը: Մի՞թե ինչ-որ տիեզերական հսկա եկավ, հավաքեց, լցրեց զամբյուղը և տարավ: Ո՛չ, դրանք իրենց տեղում են, պարզապես տեսանելի չեն: Իսկ հետո երկինքը մթնում է, և երբ գիշերը ձյութի նման սև է հագնում, աստղերը երևում են իրենց ամբողջ փառքով: Երբ հրաժարվում եք քարոզել մեղքի արմատական ապականության մասին, անհնար է դառնում Աստծուն, Քրիստոսին ու Նրա խաչին փառք բերելը: Հիսուս Քրիստոսի խաչը և դրա փառքն ամենաշատը մեծարվում են մեր ապականության ետնապատկերի վրա: Ղուկասը պատմում է մի կնոջ մասին, ով շատ սիրեց, քանի որ իրեն շատ ներվեց (տե՛ս Ղուկ. 7.47):

Նա գիտեր, թե որքան բան էր իրեն ներվել, քանի որ գիտեր, թե որքան չար էր ինքը: Իսկ մենք վախենում ենք մարդկանց ասել իրենց չարության մասին, և արդյուն-

քում նրանք այդպես էլ չեն կարողանում սիրել Աստծուն: Մենք գողանում ենք նրանցից «ով որ պարծենում է, թող Տերով պարծենա» (Բ Կորնթ. 10.17) հորդորին հետևելու հնարավորությունը, և նրանք պարծենում են իրենց անձերով:

4

Հիսուս Քրիստոսի Ավետարանի չիմացություն

«Բայց Աստված հայտնեց Իր սերը մեզ, որ երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ. ապա որքա՞ն ավելի հիմա, որ արդարացանք Նրա արյունով...»:

– Հռոմեացիների 5.8,9

Պետք է ասեմ, որ Ամերիկան և մյուս արևմտյան երկրները կարծրացած չեն Ավետարանի նկատմամբ. նրանք, իրականում, չգիտեն Ավետարանը, քանի որ Ավետարանը չգիտի նրանց քարոզիչների մեծ մասը: Թո՛ւյլ տվեք կրկնել սա: Մեր երկրների ախտը ո՛չ ազատական քաղաքական գործիչներն են, ո՛չ սոցիալիզմի արմատները, ո՛չ Հոլիվուդը կամ որևէ այլ բան, այլ՝ մեր օրերի, այսպես կոչված, ավետարանական հովիվն է, քարոզիչը կամ ավետարանիչը: Ահա թե որտեղ պետք է փնտրել ախտը: Մենք չգիտենք Ավետարանը: Վերցրել ենք մեր

օրինյալ Աստծո փառահեղ Ավետարանը և կրճատել ու վերածել այն չորս հոգևոր օրենքների, հինգ բանի, որ Աստված ցանկանում է՝ իմանանք, և այդ ամենը եզրափակող կարճ անվանական աղոթքի: Եվ երբ ինչ-որ մեկը մեր հետևից կրկնում է այն բավականաչափ ակնառու անկեղծությամբ, մենք պապականորեն նրան հռչակում ենք վերստին ծնված: Վերստին ծնունդը՝ կրկին ծնվելու աստվածաշնչյան ուսմունքը, մենք փոխարինում ենք լոկ անձնական որոշում կայացնելու հետ[1]:

Զարմանալի է, թե որքան երեսուն-քառասուն տարեկան աստվածապաշտ հավատացյալներ են մոտենում ինձ այն բանից հետո, երբ քարոզում եմ այս մասին, և ասում են, որ նախկինում երբևէ չէին լսել դա: Մինչդեռ սա փրկագնման և քավության[2] պատմական վարդապետությունն է:

Հստակ սահմանում տանք այս հարցին: Ավետարանը սկսվում է Աստծո բնույթով: Այնուհետև անցում է կատարվում մարդկային բնույթին և վերջինիս ընկած լինելուն: Ավետարանի այս երկու մեծ սյունակները առաջ են բերում այն, ինչը պետք է հայտնի լինի ամեն հավատացյալի սրտում՝ որպես «մեծ երկընտրանք»: Եվ ո՞րն է այդ երկընտրանքը: Դա ամբողջ Սուրբ Գրքում առկա մեծագույն հարցն է. եթե Աստված արդար է, ապա Նա չի կա-

---

1 «Անձնական որոշում կայացնելը» սովորաբար արտահայտվում է դեպի եկեղեցու խորանը քայլելով՝ որպես հավատք ցույց տալու և/կամ մեղավորի աղոթք անելու միջոց, հավասարազոր է մեղքերից ապաշխարելուն և այդ մեղքերի թողությունը միայն Քրիստոսին վստահելուն:

2 Փրկագնումը Աստծո ընտրյալների ազատումն է մեղքի կարգավիճակից դեպի փրկության կարգավիճակ՝ Քրիստոսի կողմից վճարված փրկագնի միջոցով և արժեքով: Քավություն՝ նշանակում է բավարարում՝ զոհաբերություն մեղքի դիմաց, որը հանգցնում է Աստծո բարկությունը:

րող ներել ձեր մեղքը: Ինչպե՞ս կարող է Աստված լինել արդար և միևնույն ժամանակ արդարացնել չար մարդկանց, երբ Աստծո Խոսքն ամբողջ Աստվածաշնչում ասում է այն, ինչ գրված է Առակաց գրքում. «Անզգամին արդարացնողը և արդարին անզգամ անողը՝ երկուսն էլ զզվելի են ՏԻՐՈՋԸ» (17.15): Իսկ մեր պատմական քրիստոնեական երգերի մեծ մասում կա պարծանք այն առումով, որ Աստված արդարացնում է չարերին:

Սա է մեծագույն խնդիրը: Սա է ակրոպոլիսը[3]՝ քրիստոնեական հավատքի ամենամեծ և բարձր կետը: Այդպես են ասել Մարտին Լլոյդ Ջոնսը, Չարլզ Սպերջենը և նրանք, ովքեր կարդացել և, ինչպես հարկն է, հասկացել են Հռոմեացիների թղթի երրորդ գլուխը: Քարոզիչները սա պետք է ներկայացնեն մարդկանց: Գլխավոր խնդիրն այն է, որ Աստված իսկապես արդար է, իսկ բոլոր մարդիկ իսկապես չար են: Սակայն հետո Աստված՝ Իր սեփական փառքի համար և այն մեծ սիրո շնորհիվ, որով սիրեց մեզ, ուղարկեց Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, Ով այս երկրի վրա քայլեց որպես կատարյալ մարդ: Ավելին՝ Աստծո հավիտենական ծրագրի համաձայն՝ Տեր Հիսուսը գնաց դեպի Գողգոթան: Գողգոթայի խաչափայտի վրա Նա կրեց մեր մեղքը: Նա կանգնեց Իր ժողովրդի փոխարեն, կրեց մեր մեղքը, դարձավ անեծք: «Անիծյալ լինի ամեն մարդ, որ չի կենում օրենքի Գրքի միջի բոլոր գրվածներում, որ ամենն անի» (Գաղատ. 3.10): Քրիստոսը փրկագնեց մեզ անեծքից՝ մեր փոխարեն անեծք դառնալով (տե՛ս Գաղատ. 3.13):

---

3 Հունարենից թարգմանաբար նշանակում է «բարձրադիր քաղաք». այն հին հունական քաղաքի ամրացված հատվածն էր՝ սովորաբար կառուցված ժայռի վրա:

Այնքան շատ մարդիկ են Ավետարանը դիտարկում ռոմանտիզմի և անզորության տեսանկյունից: Տեսնում են Քրիստոսին խաչափայտից կախված՝ Հռոմեական կայսրության կողմից հասցված վերքերով: Կարծում են, թե Հայրն ի զորու չէր նայել Որդու տառապանքին, այդ պատճառով էլ շրջվեց նրանից: Բոլորովին՝ ո՛չ. Նա շրջվեց, քանի որ Իր Որդին մեղք էր դարձել՝ չնայած այն բանին, որ մեղք չէր գործել:

Ուստի այն, որ Քրիստոսը պարտեզում կանչում էր՝ «Թո՛ղ այս բաժակն Ինձնից անցնի» (Մատթ. 26.39), մարդիկ այսպես են ընկալում՝ «Ի՞նչ կար այդ բաժակի մեջ. հռոմեական խաչը, մտրակի հարվածները, գամերն ու բոլոր տառապանքները»: Ես չեմ ցանկանում թերագնահատել Քրիստոսի ֆիզիկական տառապանքները խաչափայտի վրա, սակայն այդ բաժակը Հայր Աստծո բարկության բաժակն էր, որը պետք է թափվեր Որդու վրա: Ինչ-որ մեկը պետք է մահանար՝ կրելով Աստծո ժողովրդի մեղքը, թողնվեր Աստծո կողմից՝ Վերջինիս արդարության պատճառով, և ջախջախվեր Աստծո բարկության ներքո, քանի որ Աստված հաճեց զարկել Նրան (տե՛ս Եսայի 53.10):

Մեկ անգամ Եվրոպայում գերմանական ճեմարանում էի, երբ տեսա մի գիրք, որը կոչվում էր *«Քրիստոսի խաչը»*[4]: Վերցրի և սկսեցի կարդալ: Ահա թե ինչ էր գրված. «Հայրը Երկնքից նայում էր մարդկանց ձեռքով Իր Որդուն հասցված տառապանքներին և ընդունում որպես մեր մեղքերի հատուցում»: Սա հերձվածություն է: Այդ ֆիզիկական տառապանքը՝ խաչին գամվելը՝ այդ ամենը Աստ-

4 Ոչ այնքան հայտնի հատոր՝ հեղինակված Ջոն Սքոթի կողմից:

ծո բարկության մասն էր: Պետք է արյունալի զոհաբերություն լիներ: Սրա դեմ ասելու ոչինչ չունեմ, սակայն եթե այստեղ կանգ առնեք, ապա Ավետարանին չեք հասնի:

Երբ այսօր Ավետարանը քարոզվում և փոխանցվում է անհատական ավետարանչությունների միջոցով, երբևէ լսո՞ւմ եք Աստծո արդարության և բարկության մասին: Գրեթե՝ երբեք: Հստակ չի նշվում, որ մեղավորներին փրկագնելու համար Քրիստոսը ջախջախվեց Աստծո արդարության ներքո: Իր սիրելի Որդու մահվամբ բավարարելով Իր աստվածային արդարությունը՝ Աստված այժմ թե՛ արդար է, և թե՛ չարերին արդարացնող:

Սրանից պակաս քարոզված ցանկացած բան Ավետարանի կրճատում է: Մենք զարմանում ենք, թե ինչու այն զորություն չունի: Ի՞նչ է պատահել: Ես կարող եմ պատասխանել այս հարցին: Երբ Ավետարանը մի կողմում է թողնվում, այլևս զորություն չի մնում ձեր ենթադրյալ ավետարանի ուղերձի մեջ, հետևաբար, դուք ստիպված եք լինում դիմելու առևտրի ամեն տեսակի փոքրիկ հնարքների, որոնք այսօր այդքան տարածված են՝ մարդկանց դարձի բերելու համար. բոլորս ծանոթ ենք դրանց մեծ մասին: Սակայն դրանցից ոչ մեկը չի գործում:

Մի քանի տարի առաջ, երբ ավարտեցի ճեմարանը, Աստված ուղարկեց ինձ Պերուի ջունգլիներ՝ հոգևոր կյանքս փրկելու համար: Եվ այնտեղ ես հասկացա. ինչպես Սպերջենն է ասել. «Ինձնից ավելի մեծ մարդիկ ավելի մեծ հանճարով են մոտեցել Երկրորդ գալստյան վարդապետությանը, սակայն՝ անօգուտ: Այն մեծ և զորավոր վարդապետություն է»: Այնուհետև նա նշում է իր եզրահանգումը. «Ես նախընտրում եմ նվիրել ինձ Հիսուս

Քրիստոսի՝ խաչված Հիսուսի մասին ինչ-որ բան հասկանալուն»:

Ինձ այնքան է բարկացնում այն, որ մարդիկ Քրիստոսի փառահեղ Ավետարանին վերաբերում են որպես առաջին քայլի՝ դեպի քրիստոնեություն, որի համար պահանջվում է ընդամենը տասը րոպե խորհրդատվություն, ինչից հետո անցում է կատարվում ավելի կարևոր բաների: Սա ցույց է տալիս, թե որքան պաթետիկ է Աստծո բաների մասին մեր իմացությունը:

Բարեկա՛մս, Երկրորդ գալստյան օրը դուք կհասկանաք ամեն բան Երկրորդ գալստյան մասին, սակայն երկնային հավիտենության մեջ կամաց-կամաց կմբռնեք Աստծո փառքը Գողգոթայում: Երիտասա՛րդ, երիտասարդ քարոզի՛չ, խնդրում եմ՝ ուշադի՛ր եղեք: Հասե՛ք խաչափայտի մասին ճշմարտությանը: Հասկացե՛ք, թե ինչ է այն նշանակում: Եթե մի ակնթարթ հասկանաք, թե ինչ է արել Քրիստոսը խաչափայտի վրա, ձեր բուրվառով օտար կրակ մատուցելու կարիք ու ցանկություն չեք ունենա (տե՛ս Ղևտ. 10.1-3):

Շատ անգամներ եմ ասել և սիրում եմ ասել հետևյալը. Աբրահամն Իսահակին՝ իր որդուն, իր միակ ու սիրելի որդուն, բարձրացրեց սարը: Չե՞ք կարծում, որ Սուրբ Հոգին մեզ ապագայում իրականանալիք ինչ-որ բանի մասին էր փորձում ասել: Որդին դիմադրություն չցուցաբերեց, այլ՝ պառկեց: Եվ հայրն, իր կամքն Աստծո կամքին հնազանդեցնելով, բարձրացրեց կայծքարից դանակը, որպեսզի խոցեր իր իսկ որդու սիրտը: Սակայն ծերունու ձեռքն օդում մնաց, քանի որ նրան ասվեց, որ Աստված խոյ է պատրաստել զոհաբերության համար:

Այնքան քրիստոնյաներ են մտածում հետևյալ կերպ. «Օ՜, պատմության ինչպիսի՜ գեղեցիկ ավարտ»: Դա ավարտը չէ: Դա ընդմիջումն է: Հազարավոր տարիներ անց Հայր Աստված ձեռք բարձրացրեց Իր Որդու՝ Իր միածին Որդու վրա, ում սիրում էր: Նա կայծքարից դանակը վերցրեց Աբրահամի ձեռքից և սպանեց Իր միածին Որդուն՝ Իր բարկության ամբողջ կատաղությամբ:

Հիմա հասկանո՞ւմ եք, թե ինչու զորություն չունի այն փոքրիկ Ավետարանը, որը քարոզում եք. որովհետև այն իսկական Ավետարանը չէ: Անցե՛ք Ավետարանին: Անցկացրե՛ք ձեր կյանքը ծնկների վրա: Հեռացե՛ք Աստծո Խոսքի վրա չհենվող մարդկանց ուսմունքներից: Ուսումնասիրե՛ք խաչը:

Այն ամենի պատճառը, ինչի մասին խոսում էինք, վերստին ծնունդի վարդապետության չիմացությունն է: Գիտեմ, որ կան կալվինականներ և արմինիականներ, և դրանց միջև շատ այլ տարօրինակ տեսակետներ[5]: Ես ինքս ինձ կոչում եմ «հինգից հինգ Սպերջենիստ»: Սակայն ցանկանում եմ, որ իմանաք հետևյալը. հարցը կալվինականությունը չէ: Հարցը վերստին ծնունդի

5 Կալվինականները նրանք են, ովքեր ծնունդով ֆրանսիացի Ջոն Կալվինի (1509-1564թթ.) հետ հավատում են, որ Աստվածաշունչը սովորեցնում է Աստծո Խոսքի գերակա հեղինակության, Աստծո ինքնիշխանության, նախախնամության և շնորհքի վարդապետության մասին: Այս վարդապետությունները Դորտի Սինոդի (1618-1619թթ.) պատասխանն էին արմինիականների ընդվզմանը: Արմինիականները Նիդերլանդների Աուդեվաթեր քաղաքում ծնված հոլանդացի աստվածաբան Յակոբուս Արմինիուսի (1560-1609թթ.) հետևորդներն էին: Նա մերժում էր նախասահմանության մասին բարեկարգողների ընկալումը: Արմինիականները, որպես կանոն, սովորեցնում էին, որ անհատների վերաբերյալ նախասահմանությունը հիմնված է այն բանին, որ Աստված կանխավ գիտի՝ նրանք ընդունելո՞ւ են, թե՞ մերժելու են Քրիստոսին՝ իրենց ազատ կամքով:

վարդապետությունն է: Այդ է պատճառը, որ ես կարող եմ ընկերակցել Վեսլիի, Ռեյվենհիլի, Թոզերի և նրանց նմանների հետ. անկախ այլ հարցերի վերաբերյալ նրանց սխալներից՝ նրանք համոզված էին, որ փրկությունը չի կարող մանիպուլյացիայի ենթարկվել քարոզչի կողմից, այլ՝ Ամենակարող Աստծո զորության փառահեղ աշխատանքն է: Ես էլ եմ միանում նրանց այն հարցմանը, որ վերստին ծնունդի համար աստվածային աշխատանքի կարիքը կա:

Սուրբ Հոգու կողմից վերածնման աշխատանքի մեջ Աստծո զորությունը ավելի մեծ չափով է դրսևորվում, քան աշխարհի և ամբողջ տիեզերքի արարման մեջ, քանի որ Նա աշխարհը ստեղծեց *«ex nihilo»*՝ ոչնչից, իսկ մարդուն վերաստեղծում է ապականված զանգվածից: Սա նման է մեր Փրկչի հարությանը՝ մեռելներից:

Հասկանում եմ, որ քարոզչությամբ զբաղվում են տարբեր պարգևներ ունեցող մարդիկ՝ ուսուցիչներ, քարոզիչներ և մեկնաբաններ. բոլորն էլ անհրաժեշտ են եկեղեցու առողջության համար: Սակայն հարկավոր է հասկանալ հետևյալը: Լսել եմ, որ երբ ծեր Ջ. Քեմփբել Մորգանը[6] գնում էր իրենց եկեղեցու շենքի վեհաշուք աշտարակը՝ քարոզելու, ինքն իրեն հիշեցնում էր հետևյալ աստվածաշնչյան խոսքերը. «Ինչպես մի ոչխար, որ մորթվելու է տարվում, և ինչպես մի մունջ մաքի՝ իր խուզողների առջև» (Եսայի 53.7): Նա գիտեր, որ եթե չլիներ Սուրբ Հոգու կատարած վերածնման աշխատանքը, իր ասած

6 Ջ. Քեմփբել Մորգանը (1863-1945թթ.) բրիտանացի ավետարանիչ, քարոզիչ և գիտնական էր: Նա հովիվ էր Լոնդոնի Վեսթմինսթերի տաճարում՝ Դ. Մարտին Լլոյդ-Ջոնսից առաջ:

ամեն խոսքը մահ կբերեր: Հոգին է, որ կյանք է տալիս (տե՛ս Հովհ. 6.64):

Այդ առումով, մեզնից ամեն մեկն, ով Աստծո Խոսքի ճշմարտությունն է հռչակում, պետք է հռչակի դա՝ որպես մարգարե: Թո՛ւյլ տվեք բացատրել, թե ինչ նկատի ունեմ: Նկատի ունեմ այն, որ մենք միշտ Եզեկիելի կարգավիճակում ենք, ով կանգնած էր մեռած ու չորացած ոսկորների դաշտում (տե՛ս Եզեկ. 37.1,2): Մտնում ենք այդ դաշտ և ի՞նչ ենք անում. մարգարեանում ենք: Ասում ենք. «Ակա՛նջ դրեք Տիրոջ Խոսքին»: Մենք գիտենք, որ Տիրոջ քամին պետք է փչի սպանվածների վրա, հակառակ պարագայում նրանք կյանքի չեն վերադառնա: Երբ լիովին՝ ձեր ամբողջ էությամբ հասկանաք սա, այլևս չեք տրվի այն մանիպուլյացիային, որը հաճախ արվում է հանուն ավետարանչության. փոխարենը՝ կհռչակեք Աստծո՛ Խոսքը:

Պատկերացրեք, թե ինչի հետ պետք է առերեսվեր նման քարոզիչը: Մտածե՛ք Ջորջ Ուայթֆիլդի մասին: Բոլորը այն ժամանակ կարծում էին, թե քրիստոնյա են՝ լիարժեք քրիստոնյա: Ինչո՞ւ. որովհետև մանուկ ժամանակ մկրտվել էին, մտցվել «ուխտի» մեջ և հաստատվել՝ որպես այդպիսին, մինչդեռ ապրում էին սատանաների նման: Վերստին ծնունդը վաճառվում էր լոկ ինչ-որ հավատքի դավանանքի դիմաց, որին կշիռ էին տվել այն ժամանակի կրոնական առաջնորդները[7]:

Ուայթֆիլդը և Վեսլին մարդկանց ասում էին, որ դա նրանց անձերի համար լավ չէր, որ այդպես վերստին

7 Այստեղ նկատի է առնված ձևական դավանանքը կամ հավատքի պնդումը՝ առանց նոր սրտի, առանց փրկող հավատքի և առանց Աստծո հանդեպ ճշմարիտ ու սրտանց սիրո:

չեն ծնվում: Չկար հոգևոր կյանքի ապացույց: Քննե՛ք ինքներդ ձեզ: Փորձե՛ք ինքներդ ձեզ և տեսեք, թե արդյո՞ք հավատքի մեջ եք (տե՛ս Բ Կորնթ. 13.5): Ձեր կոչումը և ընտրությունը հաստա՛տ արեք (տե՛ս Բ Պետր. 1.10): «Պետք է ձեզ վերստին ծնվել» (Հովհ. 3.7):

Վերջին մի քանի տասնամյակի ժամանակակից ավետարանչության պատճառով Ամերիկայում և այլ վայրերում լիովին կորսվել է «վերստին ծնվելու» ճշմարիտ գաղափարը: Հիմա դրա իմաստը լոկ այն է, որ դուք ավետարանչական արշավի ժամանակ ինչ-որ որոշում եք կայացրել և կարծել եք, թե այդ որոշումն անկեղծ է: Սակայն չկա ապացույցն այն բանի, որ Սուրբ Հոգին ձեր կյանքում վերաստեղծման գերբնական աշխատանք է կատարել: «Ուրեմն, եթե *[ցանկացած]* մեկը (ոչ թե միայն ոմանք) Քրիստոսում է՝ նոր ստեղծված է» (Բ Կորնթ. 5.17, հեղինակի շեշտադրումը):

Այսօր մենք Վեսլիի և Ուայթֆիլդի պես միևնույն պայքարի մեջ ենք: Ամերիկայում խնդիրը մանուկների մկրտությունը չէ, ո՛չ էլ «բարձր եկեղեցու» հաստատումը եկեղեցական իշխանությամբ, չնայած հնարավոր է, որ աշխարհի որոշ վայրերում դա ևս կա: Մենք այսօր հաճախ առնչվում ենք, այսպես կոչված, «ապաշխարության աղոթքին»: Ուզում եմ, որ իմանաք հետևյալը. եթե կա մի բան, որին ես պատերազմ կհայտարարեի, դա ապաշխարության աղոթքն է:

Ապաշխարության աղոթքը այսօրվա ոսկե հորթն է մկրտականների, ավետարանականների և նրանց համար, ովքեր այս հարցում հետևում են նրանց: Ապաշխարության աղոթքը ավելի շատ մարդկանց է տարել

դժոխք, քան երկրի վրա որևէ այլ բան:

Միգուցե հարցնեք. «Ինչպե՞ս կարող ես նման բան ասել»: Կպատասխանեմ. «Խնդրեմ՝ բացե՛ք Սուրբ Գիրքը և ցո՛ւյց տվեք մի տեղ, որտեղ որևէ մեկն այդկերպ է ավետարանել»: Աստծո Խոսքում չի ասվում, որ Հիսուս Քրիստոսը եկավ Իսրայելի ժողովրդի մոտ և ասաց. «Ժամանակը լրացել է, և Աստծո արքայությունը մոտեցել է: Հիմա ո՞վ է ցանկանում հրավիրել Ինձ իր սրտի մեջ: Ձեռքեր եմ տեսնում»: Քրիստոսը նման բան չի ասում, այլ ասում է. «Ապաշխարե՛ք և հավատացե՛ք Ավետարանին» (Մարկ. 1.15):

Այժմ մարդիկ հենվում են այն բանի վրա, որ գոնե մեկ անգամ իրենց կյանքում մի աղոթք են արել, և ինչ-որ մեկն իրենց ասել է, որ փրկված են, քանի որ բավականաչափ անկեղծ են եղել աղոթելիս: Ուստի, եթե հարցնեք նրանց՝ արդյո՞ք փրկված են, նրանք չեն պատասխանի այսպես. «Այո՛, փրկված եմ, քանի որ նայում եմ Հիսուսին, և կա զորավոր ապացույց, որը հաստատում է, որ վերստին ծնված եմ»: Ո՛չ, փոխարենը կասեն. «Կյանքում մեկ անգամ մի աղոթք եմ արել»: Անաստված կյանքով են ապրում, սակայն մեկ անգամ մի աղոթք են արել: Լսել եմ մի ավետարանչի մասին, ով մի մարդու համոզում էր անել դա: Այդ մարդն այնքան անհարմար էր զգում, որ ավետարանիչն ի վերջո ասաց. «Լա՛վ, մենք կվարվենք հետևյալ կերպ: Ես Աստծուն կաղոթեմ քո փոխարեն, և եթե համաձայն ես, ապա սեղմի՛ր ձեռքս»:

Մի՞թե դա Աստծո զորությունն է: Սա անձնական որոշում կայացնել է՝ լոկ կռապաշտություն: Մարդիկ կարծում են, թե Երկինք են գնալու, քանի որ դատել են իրենց իսկ

որոշման անկեղծությունը: Երբ Պողոսը գնաց Կորնթոսի եկեղեցի, նրանց չասաց. «Դուք քրիստոնյային վայել չեք ապրում, ուստի եկեք վերադառնանք ձեր կյանքի այն պահին, երբ արել եք այդ աղոթքը, և տեսնենք՝ արդյո՞ք անկեղծ եք աղոթել»: Ո՛չ, այլ՝ ասաց. «Փորձեք ձեր անձերը, թե արդյո՞ք հավատքի մեջ եք. քննեք ձեր անձերը...» (Բ Կորնթ. 13.5):

Բարեկամներս, ցանկանում եմ, որ իմանաք՝ փրկությունը միայն հավատքից է: Դա Աստծո աշխատանքն է: Դա շնորհք է՝ շնորհքի տեղ: Սակայն դարձի գալու ապացույցը միայն ձեր անկեղծությունը քննելը չէ, այլ ձեր կյանքի շարունակական պտուղն է:

Տեսեք, թե ինչ ենք արել: Արդյոք ծառն իր պտղի՞ց է ճանաչվում (տես Մատթ. 7.20): Այսօր ամերիկացիների վաթսուն կամ յոթանասուն տոկոսը կարծում է, թե դարձի եկած և վերստին ծնված է, սակայն ամեն օր հազարավոր մանուկների ենք սպանում: Այո՛, կարծում ենք, թե քրիստոնյա ենք: Եվ ես սրա մեղավորությունը դնում եմ հենց քարոզիչների ոտքերի առջև:

5

Ոչ աստվածաշնչյան հրավեր դեպի Ավետարան

«Ժամանակը կատարվել է, և Աստծո թագավորությունը մոտեցել է. ապաշխարե՛ք և հավատացե՛ք Ավետարանին»:

– Մարկոս 1.15

Ամենուր տեսել եմ դեպի Ավետարան ոչ աստվածաշնչյան հրավերի խնդիրը: Իրենց կալվինական կոչեն, թե արմինիական, շատ քարոզիչներ են անում նույն մակերեսային հրավերը, երբ առաջնորդում են մարդկանց Հիսուս Քրիստոսին իրենց սրտերում ընդունելու հարցում: Երկար խոսում են տարբեր թեմաներից, իսկ հետո անցնում հրավերին. տպավորություն է, որ բոլորը խելքը թռցրել են:

Ցանկացած մեկին մոտեցեք և ասեք. «Աստված սիրում է ձեզ և հրաշալի ծրագիր ունի ձեր կյանքի համար»: Պատկերացնո՞ւմ եք ամերիկացուն ասեն. «Պարո՛ն, Աստ-

ված սիրում է ձեզ և հրաշալի ծրագիր ունի ձեր կյանքի համար»:

«Ինչ: Աստված ինձ սիրո՞ւմ է: Լա՛վ,- կլսես պատասխանը,- դա հրաշալի է, քանի որ ես նույնպես սիրում եմ ինձ: Դա սքանչելի՜ է: Ասացիք, որ Աստված հրաշալի ծրագիր ունի: Ես նույնպես հրաշալի ծրագիր ունեմ իմ կյանքի համար: Եվ եթե Նրան ընդունեմ կյանքիս մեջ, ապա այստեղ լավագույն կյանքը կունենամ: Դա միանշանակ հրաշալի է»:

Սա աստվածաշնչյան ավետարանչություն չէ: Թո՛ւյլ տվեք փոխարինող մի բան տալ: Երբ Աստված գալիս է Մովսեսի մոտ, վերջինս ասում է.

> «Եհովա, Եհովա՝ Աստված ողորմած և գթած՝ երկայնամիտ և առատ ողորմությունով ու ճշմարտությունով, որ հազարների ողորմություն ես անում, որ անօրինություն՝ հանցանք և մեղք ես ներում, բայց հանցավորին բնավ անպարտ չես թողնում. որ հայրերի անօրինությունը հատուցում ես որդիների վրա և որդիների որդիների վրա՝ մինչև երրորդ և չորրորդ ազգը» (Ելից 34. 6,7):

Ինչպիսի՞ն էր Մովսեսի արձագանքը. «Եվ Մովսեսը շտապելով մինչև գետին խոնարհվեց և երկրպագություն արեց» (Ելից 34.8):

Ավետարանչությունը սկսվում է Աստծո բնությունից: Ո՞վ է Աստված: Կարո՞ղ է արդյոք մարդն ինչ-որ բան գիտակցել իր մեղքի մասին, եթե չկա չափորոշիչ, որի հետ պետք է համեմատի իրեն: Եթե մենք մարդուն Աստծո մասին աննշան բաներից բացի ոչինչ չենք ասում, և դա

պարզապես շոյում է նրա մարմնական միտքը[1], արդյո՞ք նա երբևէ իրապես կապաշխարի և հավատքով կլցվի:

Ուստի, չենք կարող և չպետք է սկսենք այսպես. «Աստված սիրում է ձեզ և հրաշալի ծրագիր ունի ձեզ համար»: Պետք է զրույցը սկսել՝ ամբողջապես ներկայացնելով, թե ով է Աստված: Եվ հենց սկզբում պետք է ասել մարդուն, որ դա կարող է նրան իր կյանքն արժենալ (տե՛ս Մատթ. 16.24):

Այնուհետև, այս ամենից հետո շատերն այսպիսի մակերեսային բացատրական հարցեր են տալիս. «Դու գիտես, որ մեղավոր ես, այնպես չէ՞»: Դա նման կլիներ նրան, որ բժիշկը մտներ մորս սենյակ, ով տարիներ առաջ քաղցկեղի պատճառով մահամերձ վիճակում էր, և ասեր. «Բա՛րբ, դու գիտես, որ քաղցկեղով հիվանդ ես, այնպես չէ՞»: Այնքան մակերեսայնորեն ենք մոտենում: Չկա կշիռ, չկա լրջություն: Փոխարենը պետք է ասենք. «Պարո՛ն, ձեզ վրա սարսափելի ախտ կա, որի համար դատաստան է սպասվում»: Եթե մարդուն պարզապես ասեք՝ «Պարո՛ն, գիտե՞ք, որ մեղավոր եք», նրա սրտին առհասարակ հանդիմանություն չի դիպչի: Գնացե՛ք և սատանայից հարցրե՛ք, թե արդյո՞ք գիտի, որ մեղավոր է: Նա կասի. «Այո՛, մեղավոր եմ: Բավականին լավ եմ, կամ էլ՝ բավականին վատ եմ, նայած, թե որ տեսանկյունից եք նայում: Սակայն, այո՛, գիտեմ, որ մեղավոր եմ»:

Հետևաբար հարցն այն չէ՝ արդյո՞ք մարդը գիտի, որ մեղավոր է: Հարցը պետք է հետևյալ կերպ ձևակերպվի. «Արդյոք Սուրբ Հոգին Ավետարանի քարոզչության

1 Խոսքը մարմնավոր կամ դարձի չեկած մարդու մտքի մասին է՝ ի հակադրություն հոգևոր մարդու կամ քրիստոնյայի:

միջոցով աշխատել է ձեր սրտի հետ այնպես, որ փոփոխություն տեղի ունենա, և այն մեղքը, որը նախկինում սիրում էիք, կարո՞ղ եք հիմա ատել. այն մեղքից, որին նախկինում ձգտում էիք, կարո՞ղ եք հիմա փախչել, ինչպես վիշապից կփախչեիք»:

Այսօրվա մակերեսային հարցերի շարքին է պատկանում նաև «ցանկանո՞ւմ եք Երկինք գնալ» հարցը: Սա է պատճառը՝ ինչու ես թույլ չեմ տալիս, որ իմ երեխաները հաճախեն որոշ ավետարանական եկեղեցիների կիրակնօրյա և արձակուրդներին անցկացվող աստվածաշնչյան դպրոցներ: Ինչ-որ մարդ, բարի նկատառումներից ելնելով, կարող է վեր կենալ և Հիսուսի մասին ֆիլմից հետո ասել. «Մի՞թե հրաշալի չէ Հիսուսը»:

«Այո՛»,- կպատասխանեն երեխաները:

«Երեխանե՛ր, քանի՞սդ եք սիրում Հիսուսին»:

«Ես եմ սիրում»:

«Ո՞վ է ցանկանում ընդունել Հիսուսին իր սրտի մեջ»:

«Ես եմ ցանկանում»:

Հետո մկրտվում են: Եվ որոշ ժամանակ կարող են ապրել քրիստոնյայի նման, քանի որ նրանց լավ սովորեցրել են: Մեծանում են քրիստոնեական կամ, առնվազն, եկեղեցական մշակույթի մեջ, սակայն երբ դառնում են տասնհինգ-տասնվեց տարեկան, և նրանցում ձևավորվում է սեփական կամքի ուժը, դառնում են սանձարձակ և ապրում են չարության մեջ: Այնուհետև մենք քայլում ենք նրանց հետևից ու ասում. «Դուք քրիստոնյա եք, սակայն քրիստոնյայի նման չեք ապրում. մի՛ նահանջեք»:

Փոխարենը՝ պետք է ավելի աստվածաշնչյան մոտե-

ցում ցուցաբերենք և ասենք. «Դուք Քրիստոսին հավատքի խոստովանություն եք արել: Դուք նույնիսկ մկրտությամբ եք Նրան դավանել: Քննե՛ք ձեզ: Փորձե՛ք ձեզ: Ձեր մեջ քիչ բան է խոսում այն մասին, որ ճշմարտապես դարձի եք եկել»:

Այնուհետև համալսարանն ավարտելուց հետո, երբ դառնում են քսանչորս, քսանհինգ կամ երեսուն տարեկան, վերադառնում են եկեղեցի և «վերընծայում իրենց կյանքը»: Այդպիսով միանում են կեղծ քրիստոնեական բարոյակարգին, որը ներառում է Ամերիկայի «եկեղեցականությունը»: Իսկ վերջին, Մեծ օրը նրանք կլսեն. «Երբե՛ք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ» (Մատթ. 7.23):

Գուցե ասեք. «Դուք այնքան բարկացած եք, այնքան դաժան և արհամարհական»: Մի՞թե իրավունք չունեմ արդարացիորեն բարկանալու: Արդյո՞ք դաժան է ճշմարտությունը սիրով ասելը: Արդյոք արհամարհակա՞ն է այն, որ բացահայտում եմ կեղծ հույսը: Պետք է արթնության համար աղաղակենք, սակայն, նույնիսկ մեր հիմքերն ուղիղ չեն: Օ՜, արթնությունը կգա և կուղղի մեր հիմքերը: Մենք ունենք աչքեր և ականջներ, ունենք Աստծո Խոսքը մեր առջև. մի՞թե չենք կարող ինքներս ուղղել Ավետարանի հրավերին վերաբերող այս սխալները:

Ինչո՞ւ ենք հարցնում. «Կցանկանա՞ք գնալ Երկինք»: Բարեկա՛մս, սթափ միտք ունեցող յուրաքանչյուր ոք ցանկանում է ինչ-որ տեսակի երկինք գնալ, սակայն չի ցանկանում, որ Աստված այնտեղ լինի, երբ ինքը տեղ կհասնի: Ուստի, հարցն այն չէ, թե արդյո՞ք մարդը ցանկանում է գնալ Երկինք, այլ այն՝ թե արդյո՞ք ցանկանում է

Աստծուն, արդյո՞ք դադարել է Աստծուն ատելուց, արդյո՞ք Քրիստոսը թանկ է նրա համար, ցանկանո՞ւմ է Քրիստոսին:

Ահա թե ինչի մասին է քաղաքական տեսությունը: Բոլորն էլ ցանկանում են գնալ Երկինք, սակայն ատում են Աստծուն: Այսպիսով, հարցն այն չէ՝ «Ցանկանո՞ւմ եք գնալ մի հատուկ վայր, որտեղ այլևս ցավ չի լինի, և դուք կունենաք այն, ինչ կուզեք»: Հարցը հետևյալն է՝ «Ցանկանո՞ւմ եք Աստծուն: Արդյո՞ք Քրիստոսը ձեզ համար թանկ է»:

Հաճախ, մարդուն ապաշխարության աղոթքի մեջ առաջնորդելիս, հարցնում են. «Ցանկանո՞ւմ եք գնալ Երկինք»:

«Դե, այո՛»,- ինչում է պատասխանը:

«Այդ դեպքում կցանկանա՞ք աղոթել և խնդրել, որ Հիսուսը գա ձեր սրտի մեջ»:

Խնդրում եմ՝ ինձ ճի՛շտ հասկացեք: Կան մարդիկ, ովքեր այդ մեթոդով *իսկապես* փրկվում են, սակայն դա մեթոդի շնորհիվ չէ, այլ՝ ի հեճուկս դրան:

Փոխարենը՝ մենք պետք է հարցնենք մարդկանց. «Պարո՛ն, դուք ցանկանո՞ւմ եք Քրիստոսին: Տեսնո՞ւմ եք ձեր մեղքը»:

«Օ՜, այո՛, այո՛: Ցանկանում եմ և տեսնում եմ»:

«Պարո՛ն, եկե՛ք մի քանի սուրբգրային համար կարդանք, որոնցում նշված է, թե ինչպիսին պետք է լինի ապաշխարությունը: Արդյոք Հոգին վկայություն տալի՞ս է, որ այդ բաները ձեր կյանքում տեղի են ունենում: Տեսնո՞ւմ եք ձեր կոտրվածությունը: Տեսնո՞ւմ եք, թե որքան տարրալուծված են բոլոր այն բաները, որոնք նախկի-

նում մտածում էիք, իսկ հիմա ձեր միտքը լցված է Աստծո մասին նոր մտքերով, նոր ցանկություններով և նոր հույսով»:

«Այո՛, տեսնում եմ այդ ամենը»:

«Պարո՛ն, դրանք կարող են լինել ձեր ապաշխարության առաջին պտուղները: Հիմա գցե՛ք ձեզ Քրիստոսի վրա: Վստահե՛ք Նրան: Վստահե՛ք Նրան»: Քարոզի՛չ, դուք մարդկանց Ավետարանը պատմելու իշխանություն ունեք: Դուք իշխանություն ունեք ասելու մարդկանց, թե ինչպես փրկվեն, և սովորեցնելու այն աստվածաշնչյան սկզբունքները, որոնցով դրա հաստատությունն են ստանում: Սակայն դուք իշխանություն չունեք մարդուն ասելու, որ ինքը փրկված է. դա Աստծո Սուրբ Հոգու աշխատանքն է:

Փոխարենը, շատերը մարդկանց այս փոքրիկ ծիսակարգով են անցկացնում.

«Հրավիրե՞լ եք Հիսուսին ձեր սրտի մեջ»:

«Այո՛»,- ինչում է պատասխանը:

«Ի՞նչ եք կարծում՝ անկեղծ եք եղել»:

«Այո՛»:

«Ի՞նչ եք կարծում՝ Նա փրկե՞լ է ձեզ»:

«Չգիտեմ»:

«Իհա՛րկե, փրկել է,- պատասխանում է կեղծ քարոզիչը,- Նա խոստացել է, որ եթե դուք անկեղծությամբ հրավիրեք Նրան, Նա կգա: Ուստի, դուք փրկված եք»:

Այդ կինը, տղամարդը կամ երեխան դուրս է գալիս եկեղեցուց հինգ րոպե տևողությամբ խորհրդատվությունից հետո, իսկ ավետարանիչը գնում է ճաշելու, ու այդ

մարդիկ շարունակում են մնալ մոլորված:

Սա ոչ աստվածաշնչյան հրավեր է և ոչ աստվածաշնչյան հաստատություն: Եթե այդ մարդը երբևէ կասկածի իր փրկությանը, քարոզիչը կրկին նույնը կանի: Գուցե կրկին հարցնի. «Ձեր կյանքում եղե՞լ է այնպիսի պահ, երբ աղոթել եք և հրավիրել Հիսուսին ձեր սրտի մեջ»:

«Այո՛»:

«Անկե՞ղծ եք եղել»:

«Կարծում եմ՝ այո՛»:

«Այդ դեպքում ձեր ներկայիս կասկածներով սատանան է ձեզ անհանգստացնում»:

Եվ եթե այդ անձնավորությունը նույնիսկ եկեղեցու շրջանակներում շարունակի ապրել առանց հոգևոր աճի՝ մարմնական կյանքով, կասկած, վախ կամ հարց չի առաջանա: Մենք պարզապես մեղքը գցում ենք անձնական աշակերտության պակաս ունենալու վրա և դա վերագրում «մարմնական քրիստոնեության» վարդապետությանը:

Մարմնական քրիստոնեության գաղափարը ավելի շատ կյանքեր է կործանել և ավելի շատ մարդկանց է դժոխք ուղարկել, քան կարող եք պատկերացնել: Արդյոք քրիստոնյաները պայքարո՞ւմ են մեղքի դեմ: Այո՛: Արդյոք քրիստոնյան կարո՞ղ է ընկնել մեղքի մեջ: Միանշանա՛կ: Արդյոք քրիստոնյան կարո՞ղ է կյանքի բոլոր օրերում շարունակաբար ապրել մարմնական կենսակերպով, անպտուղ լինել, սակայն մնալ ճշմարիտ քրիստոնյա: Միանշանակ՝ ո՛չ. հակառակ պարագայում, Հին ուխտում նշված բոլոր խոստմունքները Նոր ուխտի մասին՝ կլինեին ձախողված, և սուտ կլիներ խրատի մասին այն, ինչ

Աստված ասել է Եբրայեցիների թղթում (տե՛ս Եբր. 12.6): Ծառն իր պտղի՛ց է ճանաչվում (տե՛ս Ղուկ. 6.44):

Տեսել եմ քարոզիչների, ովքեր շատ բան են հասկանում Աստծո հետ կապված տարբեր հարցերից, սակայն երբ ներկայացնում են Ավետարանը, կրկին մտնում են այս ոչ աստվածաշնչյան մեթոդաբանության մեջ:

Թո՛ւյլ տվեք, որպես քրիստոնյա, մի պատմություն պատմել իմ կյանքի ամենաթանկ պահերից: Քարոզում էի Կանադայում՝ Ալյասկայից երեսուն կիլոմետր հեռավորության վրա: Քաղաքում ավելի շատ հյուսիսամերիկյան գորշ արջեր կային, քան մարդիկ: Եկեղեցին փոքր էր՝ տանսհինգ-քսան մարդուց բաղկացած: Երբ մոտեցա ամբիոնին, մի հսկա մարդ ներս մտավ՝ վաթսուն կամ յոթանասուն տարեկան: Քարոզիս ընթացքում, երբ տեսա նրա դեմքը, ամեն բան մի կողմ թողեցի և սկսեցի Ավետարանը քարոզել: Նա ամենատխուր մարդն էր, որ երբևէ տեսել էի: Պարզապես քարոզեցի Ավետարանը, իսկ երբ ավարտեցի, ամբիոնից քայլեցի նրա ուղղությամբ:

Ասացի. «Պարո՛ն, ի՞նչ է պատահել: Ի՞նչն է ձեզ անհանգստացնում»:

Ամբողջ կյանքում այդքան տխուր և վիատված մարդ չէի տեսել: Նա հանեց մի մանիլական ծրար, որի մեջ ռենտգենի նկարներ էին, որոնք ես չէի կարող հասկանալ: «Նոր եմ դուրս եկել բժշկի աշխատասենյակից: Երեք շաբաթից մահանալու եմ»: Ահա թե ինչ ասաց այդ մարդը: «Ամբողջ կյանքս ապրել եմ՝ աշխատելով խոշոր եղջերավորների ագարակում: Այնտեղ հնարավոր է հասնել միայն ծովային ինքնաթիռով կամ ձիով սարեր

անցնելով: Երբևէ եկեղեցում չէի եղել: Երբեք Աստվածաշունչ չեմ կարդացել: Հավատում եմ, որ կա Աստված, և մեկ անգամ լսել եմ, թե ինչպես էր մեկը պատմում Հիսուս անունով մի մարդու մասին: Կյանքում երբեք ոչնչից չեմ վախեցել, իսկ հիմա սարսափում եմ»:

Ասացի. «Պարո՛ն, հասկացա՞ք ուղերձը՝ Ավետարանը»:

«Այո՛»,- ասաց նա:

Ի՞նչ կաներ քարոզիչների մեծ մասն այդ պահին: Ի՞նչ կասեին նրանք. «Կցանկանա՞ք Հիսուսին հրավիրել ձեր սրտի մեջ»:

«Պարո՛ն, դուք հասկացա՞ք այն»,- ասացի ես:

«Հասկացա: Դա ամբո՞ղջն էր: Երեխան էլ կհասկանար: Ընդամենը այդքա՞նը. հասկանամ և աղոթե՞մ, թե՞...»:

«Պարո՛ն, դուք երեք շաբաթից մահանալու եք: Իսկ ես վաղը պետք է մեկնեմ այստեղից: Սակայն կչեղարկեմ ինքնաթիռիս տոմսը, և մենք կմնանք այստեղ, որպեսզի Աստծո Խոսքով պայքարելով և Աստծուն աղաղակելով՝ դուք կա՛մ դարձի գաք, կա՛մ մահանաք և գնաք դժոխք»:

Ուստի, մենք սկսեցինք: Սկսեցի Հին կտակարանից, այնուհետև անցա Նոր կտակարանին՝ սուրբգրային բոլոր համարներին, որոնք վերաբերում են փրկագնման և փրկության մասին Աստծո խոստումներին՝ կրկին ու կրկին կարդալով Հովհաննեսի 3.16-ը, աղոթելով և Աստծուն աղաղակելով, հարցեր ուղղելով այդ մարդուն ապաշխարության, հավատքի և հաստատության մասին, աշխատելով այնքան, մինչև Քրիստոսը ձևավորվեր նրանում:

Այդ երեկո արդեն սպառված էինք, սակայն ճեղքում չկար. ոչինչ չկար: Ես ասացի. «Պարո՛ն, եկե՛ք աղոթենք»: Եվ աղոթեցինք:

Այնուհետև ասացի. «Պարո՛ն, կարդացե՛ք Հովհաննեսի 3.16-ը»:

Նա պատասխանեց. «Մենք արդեն հազար անգամ կարդացել ենք դա»:

«Գիտեմ,- ասացի,- սակայն դա փրկության ամենամեծ խոստմունքներից մեկն է: Կրկի՛ն կարդացեք այդ խոսքը»:

Երբեք չեմ մոռանա այդ պահը: Իմ Աստվածաշունչը նրա ծնկների վրա էր՝ նրա հսկայական ձեռքերի մեջ, ու նա ասաց՝ լավ: Երբ կարդում էր՝ «Եվ Աստված այնպես սիրեց աշխարհը, որ տվեց....», կանգ առավ, ապա շշնջաց. «Ես փրկված եմ»: Բացականչեց. «Փրկվա՜ծ եմ: Եղբա՛յր Փոլ, մեղքերս վեր են առնվել: Ես հավիտենական կյանք ունեմ: Ես փրկվա՜ծ եմ»:

«Ինչպե՞ս իմացար»,- հարցրի:

«Նախկինում այս խոսքը չէի՞ք կարդացել»,- պատասխանեց նա:

Ի՞նչ էր կատարվում: Կատարվում էր Աստծո Հոգու աշխատանքը՝ մարդկային փոքրիկ հնարքների փոխարեն: Այո՛: Իսկ դուք ավարտում եք քարոզն ու միակ բանը, որ ուզում եք անել՝ ճաշե՞լն է: Ո՛չ, քարոզից հետո է սկսվում աշխատանքը: Քարոզին հաջորդում է մարդկանց հոգիների հետ աշխատելու ժամանակը: Հավաքույթների ժամանակ մարդիկ կարող են առաջ գալ՝ խորհրդատվության համար, և նրանց խորհրդատվություն տրամադրեն այն մարդիկ, ովքեր առհասարակ չպետք է դրանով

զբաղվեն: Իսկ հինգ րոպե անց այդ մարդկանց տրվում է ապաշխարության աղոթքը և մի քարտ, որի վրա պետք է ստորագրեն: Այնուհետև նրանք արագ այդ քարտը փոխանցում են հովվին, ով ասում է. «Ցանկանում եմ ձեզ ներկայացնել Աստծո նորադարձ զավակին: Ընդունե՛ք նրան Աստծո ընտանիքի մեջ»: Ինչպե՞ս կարելի է համարձակվել՝ այդկերպ խաղալով փրկության հետ:

Եթե պատրաստվում եք ներկայացնել այդ մարդուն, ապա պետք է ասեք. «Այս մարդն այսօր երեկոյան դավանեց, որ հավատում է Հիսուս Քրիստոսին: Աստծո երկյուղից և մարդկային հոգիների հանդեպ սիրուց դրդված մենք կսկսենք աշխատել նրա հետ, որպեսզի նրանում իրապես ձևավորվի Քրիստոսը, որպեսզի նա ապաշխարության և հավատքի մասին աստվածաշնչյան ընկալում ունենա, ինչպես նաև հաստատություն և մեծ ուրախություն Սուրբ Հոգով: Ահա թե ինչ ենք պատրաստվում անել»:

Տեսե՛ք, թե ինչի ենք վերածել ժամանակակից քրիստոնեությունը: Աղերսում եմ ձեզ՝ տեսե՛ք, թե ինչ ենք անում: Եվ այս ամենը ինչ-որ տարօրինակ աղանդի մասին չէ, այլ՝ մեր մասին: Խոսում եմ նրա մասին, ինչն ընդունելի է ժամանակակից ավետարանչության մեջ: Աղերսո՛ւմ եմ՝ դադարե՛ք: Խնդրո՛ւմ եմ՝ դադարե՛ք:

6

Եկեղեցու բնույթի չիմացություն

«Իսկ եթե ուշանամ, որ գիտենաս, թե ինչպես պետք է Աստծո տան մեջ վարվել. որն է՝ կենդանի Աստծո եկեղեցին՝ սյուն և հաստատություն ճշմարտության»:

– Ա Տիմոթեոս 3.15

Աստված միայն մեկ կրոնական կառույց ունի՝ եկեղեցին: Մեր հիմնական նպատակը և այս աշխարհում արթնության հիմնական առարկան աստվածաշնչյան եկեղեցիներ հիմնելն է: Իմ մեծագույն վախն այն է, որ տեղի եկեղեցին այսօր արհամարհված է: Բավական է՝ մարդկանց ասեք, որ շրջագայող քարոզիչ եք, համաշխարհային ծառայություն ունեք, և բոլորը կխոնարհվեն: Սակայն եթե ասեք, որ երեսուն հոգուց բաղկացած խմբի հովիվ եք, այնպես կանեն, որ ձեզ անհաջողակ զգաք: Հիսուս Քրիստոսը շրջագայող քարոզիչների իշխանը չէ. Նա հովիվների իշխանն է:

Մի քանի տարի առաջ Բիլ Քլինթոնն իր ընտրարշավի

ժամանակ ընտրել էր հետևյալ կարգախոսը՝ «Կարևորը տնտեսությունն է, հիմա՛ր»: Իմ հովիվը, ով մեր եկեղեցու երեցներից էր, հիմնական ուսուցիչն ու քարոզող հովիվը, մի օր ասաց. «Գիտես՝ կցանկանայի մեծ քանակությամբ վերնաշապիկներ տպել»:

«Ի՞նչ գրությամբ»,- հարցրի ես:

«Կարևորը եկեղեցին է, հիմա՛ր»:

Հիսուսն Իր կյանքը տվեց Իր եկեղեցու՝ գեղեցիկ, կույս, անարատ եկեղեցու համար: Եթե ցանկանում եք ծառայության մեջ ձեր կյանքը տալ ինչ-որ բանի համար, ապա թո՛ղ դա լինի եկեղեցին՝ որոշակի եկեղեցի, հավատացյալներից բաղկացած մարմին, տեղի հարանվանություն: Կարևորը եկեղեցին է:

Հասկացեք հետևյալը. եկեղեցում չկա հավատացյալների մնացորդ: Հավանաբար ծանոթ եք մնացորդի մասին աստվածաբանությանը: Ըստ այդ ուսմունքի՝ Իսրայելի պատմության ամբողջ ընթացքում իսրայելցիներն Աստծո ժողովուրդն էին, սակայն այդ ազգության մեջ կար ճշմարիտ հավատացյալների մնացորդ: Սա եկեղեցուն չի վերաբերում: Գոյություն չունի հավատացյալների մնացորդ կամ հավատացյալների փոքր խումբ՝ մեծի մեջ, որը կոչվում է եկեղեցի: Մնացորդը հենց ճշմարիտ հավատացյալներն են եկեղեցում:

Եթե հովիվները երբևէ արել են սրբապղծությանը մոտ մի բան, ապա դա վերաբերել է այս հարցին: Լսել եմ, թե ինչպես են աստվածաբանները, շրջագայող ուսուցիչները և հովիվները նմանատիպ բաներ ասում. «Եկեղեցում նույնքան մեղք կա, որքան՝ եկեղեցուց դուրս: Եկեղեցում այնքան բաժանություններ կան, որքան՝ եկեղեցուց

դուրս: Եկեղեցում նույնչափ տարածված է անբարոյականությունն ու պոռնոգրաֆիան, որքան՝ եկեղեցուց դուրս»: Այնուհետև քարոզիչներն ասում են. «Այո՛, եկեղեցին իրեն պոռնիկի նման է պահում»: Լավ կլինի զգուշանաք Հիսուս Քրիստոսի հարսին պոռնիկ կոչելուց:

Թո՛ւյլ տվեք ասել՝ խնդիրն այն է, որ հովիվները և քարոզիչներն իրականում չգիտեն, թե ինչ է եկեղեցին: Ես ցանկանում եմ, որ դուք իմանաք, որ Ամերիկայի եկեղեցին գեղեցիկ է: Երբեմն այն տկար է, թույլ, ծեծված: Այն կատարյալ չէ, սակայն ցանկանում եմ՝ իմանաք, որ նրա սիրտը կոտրված է, և նա խոնարհ քայլում է իր Աստծո հետ: Խնդիրն այն է, որ մենք իրականում չգիտենք, թե ինչ է եկեղեցին:

Այսօր, աստվածաշնչյան քարոզչության պակասի պատճառով, այսպես կոչված, եկեղեցին լցված է մարմնական, չար մարդկանցով, ովքեր նույնացվում են քրիստոնեության հետ: Գառների շրջանում եղող այծերի պատճառով գառներին մեղադրում են այն ամենի համար, ինչ այծերն են անում: Արդյունքում, մեր պատճառով հեթանոսներն Աստծո անունն են հայհոյում (տե՛ս Հռոմ. 2.24):

Հարկավոր է կարդալ, թե ինչ է ասում Տերը Իր ծառա Երեմիայի միջոցով. «Ահա՛, օրեր են գալիս,- ասում է Տերը,- որ Իսրայելի տան հետ և Հուդայի տան հետ պիտի նոր ուխտ կապեմ. ոչ թե այն ուխտի պես, որ Ես արի նրանց հայրերի հետ, այն օրը որ Ես բռնեցի նրանց ձեռքերը՝ Եգիպտոսի երկրից նրանց հանելու համար, որ Իմ այն ուխտը նրանք զանց արին, թեպետ Ես նրանց հետ ամուսնականապես կապվել էի,- ասում է Տերը:- Այլ այս

է այն ուխտը, որ պիտի կապեմ Իսրայելի տան հետ այն օրերից հետո,- ասում է Տերը,- Իմ օրենքը պիտի դնեմ նրանց ներսում և նրանց սրտի վրա պիտի գրեմ այն, և Ես պիտի լինեմ նրանց Աստվածը, և նրանք պիտի Ինձ համար ժողովուրդ լինեն: Եվ այլևս մեկ մարդ իր ընկերոջը, և մեկ մարդ իր եղբորը չպիտի սովորեցնի՝ ասելով թե՝ Ճանաչե՛ք Տիրոջը, որովհետև նրանք ամենքը պիտի ճանաչեն Ինձ՝ նրանց փոքրերից մինչև նրանց մեծերը,- ասում է Տերը,- որովհետև Ես պիտի ներեմ նրանց անօրինությունը և նրանց մեղքերն այլևս չպիտի հիշեմ» (Երեմիա 31.31-34):

Ես չեմ ուզում որևէ բան խլել Իսրայելի ժողովրդից, սակայն այս խոսքերը վերաբերում են նաև եկեղեցուն: Չեմ ցանկանում էսխատոլոգիայի (վախճանաբանություն) բանավեճերի մեջ մտնել, սակայն Աստվածաշնչում՝ Նոր կտակարանում, այս հատվածը վերաբերում է Աստծո ժողովրդին:

Երեմիա 31.32 խոսքում Աստված ասում է. «Ոչ թե այն ուխտի պես, որ Ես արի նրանց հայրերի հետ, այն օրը որ Ես բռնեցի նրանց ձեռքից՝ Եգիպտոսի երկրից նրանց հանելու համար...»: Շարունակ լսում եմ, թե ինչպես են քարոզիչներն ասում. «Իսրայելին նայելով՝ տեսնում ենք մի խումբ անաստված մարդկանց՝ կռապաշտների, իսկ նրանց մեջ՝ ճշմարիտ հավատացյալների փոքրիկ մնացորդի»: Դա ճիշտ է, սակայն մի՛ վերագրեք դա Նոր կտակարանի եկեղեցուն, քանի որ Աստված ասում է. «Ես այլ բան եմ անելու՝ մի բան, որը նման չէ այն ուխտին, որը կապել էի նրանց հայրերի հետ այն օրը, երբ նրանց ձեռքից բռնել ու դուրս էի հանել Եգիպտոսից, այն ուխ-

տին, որ նրանք խախտեցին՝ չնայած այն բանին, որ ես ամուսին էի նրանց համար: Այլ՝ հետևյալ ուխտն եմ կապելու Իսրայելի տան հետ այդ օրերին՝ Իմ օրենքը դնելու եմ նրանց մեջ»:

Եթե դուք դարձի եկած եք, Աստված ձեզ չի տվել օրենքների քարե տախտակ, այլ գերբնական ձևով՝ վերստին ծնունդի միջոցով, այդ օրենքը գրել է ձեր սրտի մեջ: Եվ քանի որ արել է դա, ասում է. «...Ես պիտի լինեմ նրանց Աստվածը, և նրանք պիտի Ինձ համար ժողովուրդ լինեն» (խոսք 33):

Ահա՛ թե ինչ է գրված. «Եվ այլևս մեկ մարդ իր ընկերոջը, և մեկ մարդ իր եղբորը չպիտի սովորեցնի՝ ասելով թե՝ ճանաչե՛ք Տիրոջը, որովհետև նրանք ամենքը պիտի ճանաչեն Ինձ՝ նրանց փոքրերից մինչև նրանց մեծերը,- ասում է Տերը,- որովհետև Ես պիտի ներեմ նրանց անօրինությունը և նրանց մեղքերն այլևս չպիտի հիշեմ» (խոսք 34):

Սա է վերստին ծնունդի վարդապետությունը՝ դրա իրականությունը: Աստված վերջին երկու հազար տարիների ընթացքում նոր բան է անում: Ամերիկայում շատ եկեղեցիներ չկան: Կան մեծ թվով գեղեցիկ աղյուսե շինություններ և կոկիկ հարդարված սիզամարգեր: Եթե ինչ-որ մեկն ասում է, որ եկեղեցուց է կամ քրիստոնյա է, չի դարձնում նրանց այդպիսին: Ահա՛ թե ինչ է ասում Աստված. «Նրանք իրար սովորեցնելու կարիք չեն ունենա»: Սա չի նշանակում, որ չեն լինի ուսուցիչներ և քարոզիչներ, այլ՝ որ բոլորի մեջ կլինի Աստծո ակնառու ճանաչողությունը՝ մասնավորապես իրենց մեղքերը ներված լինելու վերաբերյալ:

Շարունակենք կարդալ Երեմիա 32.38-40 խոսքերը.

«Եվ նրանք Ինձ համար կլինեն ժողովուրդ, և Ես կլինեմ նրանց համար Աստված: Եվ Ես կտամ նրանց մեկ սիրտ և մեկ ճանապարհ, որ Ինձնից վախենան ամեն ժամանակ, որ լավ լինի իրենց համար և իրենցից հետո իրենց որդիների համար: Եվ Ես հավիտենական ուխտ եմ դնում նրանց հետ, որ ետ չդառնամ նրանցից՝ նրանց բարություն անելուց, և Իմ երկյուղը կդնեմ նրանց սրտերում, որ Ինձնից չհեռանան:

Եվ նրանք Ինձ համար կլինեն ժողովուրդ, և Ես կլինեմ նրանց համար Աստված»: Աստված չի ասում. «Հուսամ... գուցե... եթե բախտս բերի... եթե բավականաչափ ավետարանիչներ համագործակցեն Ինձ հետ... միգուցե այս ամենը ստացվի»: Նա, ըստ էության, ասում է. «Ես Ինձ համար ժողովուրդ կստեղծեմ՝ ժողովուրդ, ում կտամ Իմ Որդուն»: Տերն ասում է. «Նրանք Իմ ժողովուրդն են լինելու, իսկ Ես՝ նրանց Աստվածը»»:

Այնուհետև շարունակում է. «Ես կտամ նրանց մեկ սիրտ և մեկ ճանապարհ»: Հակադրությունը տեսնո՞ւմ եք: 1970-ական և 1980-ական թվականներին շատ «Հիսուսի քայլարշավներ» էին լինում, ու հազարավոր մարդիկ լալիս էին և գոչում. «Եկեղեցին այնքա՜ն մասնատված է: Եկեղեցին մեկ չէ»: Սակայն եթե եկեղեցին մեկ չէ, այդ դեպքում Նոր ուխտի խոստմունքը խաթարված է, նույնիսկ՝ անխղճաբար խախտված: Այդ դեպքում, տպավորությունն այն է, որ Աստված չի պատասխանել Իր Որդու հետևյալ աղոթքին.

«...Ո՛վ Սուրբ Հայր, պահի՛ր նրանց Քո անունով, որոնց տվեցիր Ինձ, որ մեկ լինեն՝ ինչպես Մենք... Բայց ոչ թե միայն նրանց համար եմ աղաչում, այլ նրանց համար էլ, որ նրանց խոսքով կհավատան Ինձ: Որ ամենքը մեկ լինեն՝ ինչպես Դու, Հա՛յր, Ինձանում, և Ես՝ Քեզանում, որ նրանք էլ Մեզանում մեկ լինեն. որ աշխարհը հավատա, թե Դու ուղարկեցիր Ինձ: Եվ Ես այն փառքը, որ Ինձ տվեցիր, նրանց տվեցի, որ մեկ լինեն՝ ինչպես Մենք էլ Մեկ ենք» (տե՛ս Հովհ. 17.11, 20-22):

Թո՛ւյլ տվեք ասել, որ ճշմարիտ եկեղեցին մեկ է և միշտ էլ մեկ է եղել: Երբևէ ինքնաթիռում կամ խանութում հանդիպե՞լ եք ինչ-որ մեկին, ում չեք ճանաչում, սակայն որպես ճշմարիտ ավետարանական՝ ճշմարիտ քրիստոնյա, այդ մարդու հետ հինգ րոպեից ոչ ավել խոսելուց հետո պարզել եք, որ նա հավատացյալ է: Սա կենդանի, իրական վերապրում է: Եվ այդ պահին գիտես, որ հարկ եղած դեպքում կյանքդ կտաս այդ մարդու համար:

Մի անգամ՝ քաղաքացիական պատերազմի ժամանակ, Պերուի սարերում էինք: Քսաներկու ժամ հացահատկի բեռնատարի ետնամասում նստած ճանապարհ էինք գնացել՝ սև բրեզենտի տակ: Կեսգիշերին բեռնատարը կանգ առավ: Մենք ծածկը ետ տարանք և մտանք ջունգլիներ: Այդ գիշեր մնացինք ջունգլիների ծայրամասում, այնուհետև ուղղվեցինք դեպի սարի վրա գտնվող փոքրիկ քաղաքը: Գրեթե անցել էինք ճանապարհի կեսը, երբ ես ու ընկերս՝ Պակոն, կորանք մթության մեջ: Աղոթում էինք. «Աստվա՛ծ, մեզ ինչ-որ ուղղություն տուր: Մոլորվել ենք: Այս վայրը ահաբեկիչների հսկողության տակ է: Եթե այստեղ մնանք, զինծառայողները նույնիսկ

չեն գա մեզ փնտրելու»: Աղաղակում էինք. «Աստվա՛ծ, ինչ-որ ուղի ցույց տուր մեզ: Օգնի՛ր մեզ»:

Լսեցինք զանգի ձայն: Այնուհետև լսեցինք, թե ինչպես էր ինչ-որ մեկը խոսում: Սկզբում խոսակցությունը տարօրինակ թվաց, հետո հասկացանք, որ խոսողը փոքրիկ տղա էր, ով դաշտերից էր եկել և իր ավանակի հետ էր խոսում: Նրան հետևելով՝ հասանք մի գյուղակ, որտեղ կային խրճիթներ և սնամեջ աղյուսից տներ: Ասացի. «Պակո՛, եթե այս տարածքը ահաբեկիչների հսկողության տակ է, մեզ մահ է սպասվում»:

«Այո՛,- պատասխանեց նա,- բայց գոնե ինչ-որ տեղ հասել ենք»: Դուրս եկանք և մոտեցանք մթության մեջ կանգնած մի հարբած մարդու: Ասացինք. «Այստեղ եղբայրներ կա՞ն»: Բոլորը գիտեին, որ սարերում «եղբայրը» նշանակում էր իրական քրիստոնյա:

Այդ հարբած մարդն ասաց. «Այո՛, այնտեղ ապրող կինը»: Ես մոտեցա ծեր նազովրեցի կնոջ տանը, թակեցի դուռն ու ասացի. «Ես ավետարանական հովիվ եմ: Խնդրում եմ՝ օգնե՛ք մեզ»:

Այդ ծեր կինը վերցրեց իր լապտերը, բռնեց ձեռքս ու ներս քաշեց և՛ ինձ, և՛ Պակոյին: Նրա տունը հողից ժայռակերտ տուն էր: Նա տարավ մեզ նկուղ, որտեղ հարդ և հավեր կային: Այնտեղ նստեցրեց և վառեց լապտերը: Այնուհետև մտավ մի փոքրիկ տղա, ում այդ կինն ասաց. «Գնա՛ և կանչի՛ր մյուս եղբայրներին»: Մարդիկ, չգիտես որտեղից, եկան՝ բերելով հավեր, յուկա (բուսատեսակ) և այլ բաներ՝ իրենց կյանքերը մեզ համար վտանգելով: Ինչո՞ւ. որովհետև եկեղեցին մեկ է:

Մենք պետք է դադարենք նման հիմար բաներ ասե-

լուց՝ Քրիստոսի մարմինը մասնատված է, խառնաշփոթի մեջ է և մեղքով լի է: Ես նման կերպ չէի խոսի Քրիստոսի հարսի մասին:

Այսօր շատ հարանվանություններում մի խումբ այծեր կան գառների մեջ, ովքեր որոմներ են ցանում ցորենի հասկերի մեջ (տե՛ս Մատթ. 25.31-46, 13.24-30): Քանի որ շատ քիչ է կիրառվում աստվածաշնչյան, գթառատ, եկեղեցական խրատը, այծերն ապրում են գառների հետ միասին, իսկ գայլերը սնվում են գառներով և ոչնչացնում նրանց: Եվ ձեզնից ովքեր առաջնորդներ են նման եկեղեցիներում, մեծ տուգանք են վճարելու, երբ կանգնեն այն Մեկի դիմաց, Ով սիրում է իրենց, քանի որ բավականաչափ քաջություն չեն ունեցել չարերին դեմ կանգնելու և նրանց հետ առերեսվելու:

Հյուսիսային Ամերիկայում միջին վիճակագրական եկեղեցին ժողովրդավարական է: Չեմ ցանկանում անցնել դրա բացասական և դրական կողմերին, սակայն, քանի որ Ավետարանն այդքան վատ է քարոզվում, եկեղեցիների մեծ մասը բաղկացած է մարմնավոր, մոլորված մարդկանցից: Բացի այդ՝ քանի որ եկեղեցիներում ժողովրդավարություն է տիրում, եկեղեցու ուղղությունը որոշում են մեծ մասամբ դարձի չեկածները: Դրա պատճառն այն է, որ հովիվը չի ցանկանում կորցնել մարդկանց մեծամասնությանը, և քանի որ ավետարանչության և ճշմարիտ դավանափոխության մասին սխալ պատկերացում ունի, հաճեցնում է իր եկեղեցում գտնվող չար մարդկանց: Այդպիսով, ճշմարիտ գառների փոքր խումբը, ովքեր իրապես պատկանում են Հիսուս Քրիստոսին, նստում են այդ ամբողջ թատրոնի, աշխարհա-

կանության և մուլտիմեդիայի մեջ: Նրանք աղաղակում են. «Մենք պարզապես ցանկանում ենք երկրպագել Հիսուսին: Պարզապես ցանկանում ենք, որ ինչ-որ մեկը մեզ սովորեցնի Աստվածաշունչը»: Բարեկամներս, այդ հովիվները վճարելու են իրենց եկեղեցիների սարսափելի վիճակի համար:

Շատ հովիվներ փորձում են համախմբված պահել մի խումբ չար մարդկանց, մինչդեռ նրանց շրջանում գտնվող փոքր հոտը սովից մահանում է և ստիպված գնում է այնպիսի ուղղություններով, որոնցով չի ցանկանում գնալ: Նրանք ստիպված են լինում շարժվել մարմնավոր մեծամասնության հետ:

Ենթադրենք, մեկ օր՝ ուշ գիշերին, կինս խանութում է: Դուք՝ տղամարդ լինելով, անցնում եք և տեսնում, որ մի քանի այլ տղամարդ նեղացնում են նրան, սակայն հանուն ձեր ապահովության՝ կախում եք ձեր գլուխը և պարզապես առաջ անցնում: Ես ոչ միայն կգնայի այդ տղամարդկանց հետևից, այլև կգայի ձեր հետևից: Եկեղեցին Քրիստոսի հարսն է և թանկ է Նրա համար: Հիսուսը մտահոգվում է եկեղեցու համար այն պատճառով, թե ինչպես ենք ես և դուք նայում նրան և վարվում նրա հետ: Ձեզնից գին է պահանջվելու Հիսուսին ծառայելու համար, Ով սիրում է Իր եկեղեցին: Գուցե դա ձեզ արժենա ձեր եկեղեցին, ձեր վարկանիշը, ձեր հարանվանությունը. դրա համար կարող է ցանկացած գին պահանջվել: Սակայն Հիսուս Քրիստոսի հարսը արժանի է դրան:

Ահա՛ թե ինչ է Աստված ասում. «Ես նրանց մեկ սիրտ և մեկ ճանապարհ կտամ»: Եվ ո՞րն է այդ ճանապարհը. այն Քրիստոսն է և Նրա սրբությունը: Բոլոր ճշմարիտ հավա-

տացյալներն, ում երբևէ հանդիպել եմ, շատ են խոսում Քրիստոսից: Նրանք ցանկություն ունեն ավելի սրբվելու, ավելի նմանվելու Քրիստոսին:

Տերը պարզ ասում է. «Ես կտամ նրանց մեկ սիրտ և մեկ ճանապարհ, որ Ինձնից վախենան ամեն ժամանակ, որ լավ լինի իրենց համար և իրենցից հետո իրենց որդիների համար: Եվ Ես հավիտենական ուխտ եմ դնում նրանց հետ, որ ետ չդառնամ նրանցից՝ նրանց բարություն անելուց»: Շատ մոլորված և չար մարդիկ, ովքեր այնուամենայնիվ կիրակի օրերին գնում են եկեղեցի, լսում են այս խոսքերը և իրենք իրենց ասում. «Այո՛, Աստված ինձ հետ հավիտենական ուխտ է կապել: Նա երբեք չի շրջվի ինձնից՝ երբե՛ք-երբե՛ք: Ես ապահով եմ Աստծո շնորհքի շնորհիվ»: Սակայն այդ մոլորված տղամարդիկ և կանայք լավ չեն կարդում խոսքի երկրորդ մասը:

Այնտեղ Աստված ասում է. «Եվ Ես հավիտենական ուխտ եմ դնում նրանց հետ, որ ետ չդառնամ նրանցից՝ նրանց բարություն անելուց, և Իմ երկյուղը կդնեմ նրանց սրտերում, որ Ինձնից չհեռանան»: Ապացույցն այն բանի, որ Աստված հավիտենական ուխտ է կապել ձեզ հետ, այն է, որ Նա Աստծո երկյուղն է դրել ձեր ներսում, որ դուք նրանից չշրջվեք: Եթե դուք շրջվում եք Նրանից, իսկ Նա ձեզ չի խրատում, դուք շարունակում եք Նրանից շրջված մնալ. դա խոսում է այն մասին, որ Նա Իր երկյուղը չի դրել ձեր մեջ: Իսկ դա իր հերթին խոսում է այն մասին, որ դուք վերստին չեք ծնվել և Աստծո հետ ոչ մի ուխտ էլ չունեք: Բարեկամնե՛ր, սա է աստվածաշնչյան ճշմարտությունը:

7

Սիրով լի խրատի պակաս եկեղեցում

«Եղբայրնե՛ր, եթե մեկը հանկարծ բռնվի մի հանցանքով, դուք, որ հոգևոր եք, այնպիսիին հաստատե՛ք հեզության հոգով. զգուշացի՛ր քո անձից, որ դու էլ չփորձվես»:

– Գաղատացիների 6.1

Մատթեոս 18.15-17 խոսքերում ասվում է.

«Եթե քո եղբայրը քո դեմ մեղանչի, գնա, նրան հանդիմանիր՝ երբ որ դու և նա մենակ լինեք. եթե քեզ լսի, քո եղբորը շահեցիր: Բայց եթե չլսի, վեր առ մեկ կամ երկու հոգու էլ քեզ հետ, որովհետև երկու կամ երեք վկայի բերանով ամեն բան կհաստատվի: Բայց եթե նրանց էլ չլսի, ասա եկեղեցուն. ապա եթե եկեղեցուն էլ չլսի, թող լինի քեզ համար ինչպես հեթանոս և մաքսավոր»:

Ամերիկայի ավետարանական հովիվների մեծ մասն այսօր այնպես է անարգում այս խոսքերը, որ հավասարազոր է դրանք Աստվածաշնչից պատռելուն: Իհարկե,

նման բան անել չի կարելի: Հարկավոր է ընդունել Աստվածաշունչն ամբողջությամբ կամ, առհասարակ, չընդունել այն: Շատ հովիվներ իրենց աշխատասենյակը լքելուն պես մոռանում են իրենց աստվածաբանության մասին: Աստվածաբանական մոտեցումներ են ցուցաբերում զրույցների մեջ և իրենց գրասենյակում, սակայն այն պահից, երբ ոտքը դուրս են դնում գրասենյակից, եկեղեցին վարում են մարմնական միջոցներով:

Ես իմ եկեղեցում երեց չեմ, ուստի սա ասում եմ՝ առանց պարծենալու. մեր եկեղեցում գործի է դրվում եկեղեցական խրատը: Շատ մեծ մի եկեղեցու եմ անդամակցել, որտեղ հաճախում էր շուրջ հազար մարդ: Այնտեղի հովիվները մոտավոր հաշվարկ էին արել, որ մի քանի տարվա ընթացքում երեսուն ամուսնություն էին փրկել՝ «սիրով ու գթասրտությամբ լինի» եկեղեցական խրատի միջոցով՝ խրատ, որը չի սկսվում եկեղեցուց վտարելով, այլ սկսվում է՝ «դուք, որ հոգևոր եք, հաստատե՛ք» մոտեցմամբ:

Ոմանք գուցե ասեն. «Մենք չենք կարող խրատել, քանի որ չափից շատ ենք սիրում»: Հիսուսից ավելի շա՞տ եք սիրում: Նա է, Ով արել է այդ կարգադրությունը:

Բայց միգուցե ասեք. «Սակայն դա այնքան խնդիրների կհանգեցնի»: Միանգամայն ճիշտ եք: Գուցե հենց դա է պատճառը, որ այսօր եկեղեցու մշակույթը շատ չի տարբերվում աշխարհի մշակույթից. մենք չենք հակառակվում մեզ շրջապատող մշակույթին: Եվ մշակույթին չեն հակառակվում՝ Հոլիվուդի դեմ ցույցեր անելով, այլ՝ Աստծուն հնազանդվելով: Նոյը կառուցեց տապանը և դրանով դատապարտեց աշխարհը: Ձեզ բողոքի ցուցա-

նակ հարկավոր չէ: Բավական է, որ հնազանդության մեջ քայլեք, և աշխարհը կատի ձեզ:

«Եթե քո եղբայրը քո դեմ մեղանչի, գնա, նրան հանդիմանիր՝ երբ որ դու և նա մենակ լինեք. եթե քեզ լսի, քո եղբորը շահեցիր» (Մատթ. 18.15): Որքա՜ն հրաշալի է: «Բայց եթե չլսի, վերցրու մեկ կամ երկու հոգու էլ քեզ հետ, որովհետև երկու կամ երեք վկայի բերանով ամեն բան կհաստատվի» (Մատթ. 18.16): Բարեկամնե՛րս, վկաների ներկայությունը ձեզ սատարելու համար չէ, այլ՝ անկողմնակալությամբ լսելու և դատողություն անելու: Գուցե դուք եք սխալ: Գուցե ձեր եղբայրը մեղքի մեջ չէ, այլ դուք եք չափից ավելի քննադատաբար և կրոնավոր կերպով մոտենում:

«Բայց եթե նրանց էլ չլսի, ասա եկեղեցուն. ապա եթե եկեղեցուն էլ չլսի, թող լինի քեզ համար ինչպես հեթանոս և մաքսավոր»: Այլ կերպ ասած՝ վերաբերվեք այդ մարդուն՝ որպես ոչ յուրայինի, որպես հարկահավաքի: Մենք պետք է լսենք և ուշադրություն դարձնենք այս խոսքերին: Կա՛մ պետք է սկսենք հնազանդվել Աստծուն և ինքներս մեզ կարգի բերել, կա՛մ Աստված կանի դա: Գուցե մոտենում է ժամը, երբ դա տեղի է ունենալու:

Ես չեմ խոսում քննադատող, կրոնավոր և ատելությամբ լցված մարդկանց մասին. այդպիսի մարդիկ շատ են: Խոսքը վերաբերում է հովվի, երեցների խմբի՝ առաջնորդների, ովքեր այնքան են սիրում եկեղեցին, որ կնվիրաբերեն իրենց կյանքերը հանուն եկեղեցու, քանի որ գիտեն, որ սա խաղ չէ: Սա մի բան չէ, որ միայն այս կյանքին է վերաբերում. վտանգված է հավիտենությունը՝ մարդկանց հոգիները: Ուսումնասիրե՛ք հին գրքերը՝ հե-

ղինակված այնպիսի մարդկանց կողմից, ինչպիսիք են Սպերջենը և Ուայթֆիլդը, ինչպես նաև մաքրակրոններ-ի և բարեկարգողների աշխատությունները: Այդ գրքերի մեծ մասն Ավետարանի մասին է՝ ինչ է այն, ինչպես այն քարոզել, ինչպես մարդուն առաջնորդել դեպի Քրիստոսը, ինչպես տարբերակել ճշմարիտ դավանափոխությունը, ինչպես դառնալ հոգիների բժիշկ:

Նման հարցերում շատ եկեղեցիներ միացել են Հռոմին: Հռոմեական կաթոլիկ եկեղեցում մկրտում և «քրիստոնյա» են հռչակում փոքրիկ երեխային: Այդպիսով, երեխան պատկանում է Հռոմին, և այլևս խոսք չի գնում նրան դարձի բերելու մասին, պարզապես ստեղծվում են ամեն տեսակի աշխարհային միջոցներ՝ նրան եկեղեցում պահելու համար: Շատ ավետարանական հովիվներ նույնն են անում. կես ժամ տևողությամբ քարոզից (որից քսանհինգ րոպեն նվիրված է հումորային պատմությունների), երկու-երեք րոպե տևողությամբ խորհրդատվությունից հետո մի կարճ աղոթք են անում մարդկանց հետ, այնուհետև հինգ րոպեի ընթացքում ամփոփում են, մի փոքր զրուցում և հռչակում են, որ նրանք փրկված են: Իսկ հետո կյանքի մնացած մասն անցկացնում են՝ փորձելով վերջիններիս դարձնել աշակերտներ, և զարմանում են, թե ինչու նրանք չեն աճում:

Ես հավատում եմ անձնական, դեմառդեմ աշակերտության գաղափարին: Սակայն եկե՛ք ու տեսե՛ք, որ եկեղեցին հազար տարի շարունակ, ընդհանուր առմամբ, առաջ է շարժվել՝ առանց նրա, ինչը մենք կոչում ենք անձնական աշակերտություն, ինչպես նաև առանց այն գրքերի և օգնության միջոցների, որոնք այսօր հասանելի

են: Կցանկանամ խորհեք սրա շուրջ: Անձնական աշակերտությունը հսկայական կարևորություն ստացավ յոթանասունականների ավարտին և մինչև այսօր էլ մնում է այդպիսին: Ինչն է պատճառը: «Եկեղեցուց հեռանում է այնքան մարդ, որքան նոր մարդ գալիս է: Եվ սրա պատճառն այն է, որ մենք մարդկանց չենք դարձնում աշակերտներ»: Ո՛չ. դրա պատճառն այն է, որ մարդիկ դարձի չեն գալիս: Նրանք դրսևորում են իրենց՝ որպես դարձի չեկած մարդիկ, քանի որ Քրիստոսի գառները Նրա ձայնը լսում են և հետևում են Նրան (տես Հովհ. 10.3)՝ անկախ այն բանից՝ նրանց աշակերտ կդարձնեք, թե՝ ոչ:

Մենք պետք է մարդկանց աշակերտներ դարձնենք, սակայն դրա պակասից չէ, որ մարդիկ հեռանում են: «Մեզնից դուրս գնացին... որ հայտնի լինի, թե նրանք ամենը մեզնից չէին» (Ա Հովհ. 2.19): Եվ նրանք հազիվ թե հնարավորություն ունեցան «մեզնից» լինելու, քանի որ չլսեցին ճշմարիտ Ավետարանը. ոչ ոք չաշխատեց նրանց հոգիների հետ: Այնպես է ստացվում է, որ մենք մի ամբողջ կարողություն ենք ծախսում՝ փորձելով այծերին աշակերտներ դարձնել՝ հուսալով, որ նրանք կվերածվեն գառների: Այծը գառ է դառնում միայն Ամենակարող Աստծո Հոգու գերբնական աշխատանքի շնորհիվ:

Ինձ և ընտանիքս նվիրել եմ մի հավատարիմ եկեղեցու, քանի որ այն գործադրում է եկեղեցական խրատը, իսկ ես եկեղեցու խրատի ներքո գտնվելու կարիք ունեմ: Ինձ հարկավոր է եկեղեցու երեցների և մյուս անդամների հետևողական հոգածությունը, ովքեր այս ամենին լուրջ են վերաբերվում: Ես ցանկանում եմ իմանալ, որ եթե իմ երեխաները հավատքի դավանություն անեն և

ճանապարհից շեղվեն, նրանք, անհրաժեշտության դեպքում, կբերվեն եկեղեցու առջև՝ իրենց հոգիների փրկության համար:

Ձեզնից ոմանք այնպես են բարկանում, երբ հովիվը մոտենում է և ասում. «Անկեղծ ասած, աղոթում էի ձեր երեխայի համար, բայց կարծես վստահ չեմ՝ արդյո՞ք նա վերստին ծնված է»: Այնպես եք բարկանում, որ մի խումբ մարդկանց հետ հավաք եք կազմակերպում, որպեսզի այդ հովվին հեռացնեք ծառայությունից: Իսկ գուցե փոխարենը պետք է ասեիք. «Փա՛ռք Աստծուն, որ այստեղ Աստծո մարդ ունենք»:

8

Լռություն զատման վերաբերյալ

«Անհավատների հետ այլախառն լծակից մի՛ եղեք. որովհետև ի՞նչ մասնակցություն ունի արդարությունը անօրինության հետ, և ի՞նչ հաղորդություն ունի լույսը խավարի հետ»:

– Բ Կորնթացիների 6.14

Այսօր կա կյանքի սրբության մասին լուրջ ուսմունքի պակաս: Իհարկե, կա ընդհանրական ուսմունք սրբության մասին, որին բոլորը համաձայն են: «Եկե՛ք սուրբ լինենք,- ասում են:- Պետք է ավելի սուրբ լինենք: Ինչո՞ւ չկազմակերպենք սրբությանը նվիրված համաժողով»: Սակայն երբ ավելի մասնահատուկ ես խոսում այն մասին, թե ինչ է դա նշանակում, դժգոհություններ են առաջանում:

«Հետևե՛ք խաղաղության ամենի հետ,- գրում է Եբրայեցիների թղթի հեղինակը,- և սրբության, որ առանց դրա ոչ ոք Տիրոջը չի տեսնի» (Եբր. 12.14): Կա՞ ինչ-որ մեկը, ով հավատում է այս խոսքերին: Մեկ անգամ մի հովիվ ասաց.

«Ինձ այնքա՜ն են մեղադրում «գործերով արդարացնող» կրոն քարոզելու մեջ»: Սա ևս բխում է վերստին ծնունդի և Աստծո մատակարարման սկզբունքի մասին վարդապետությունից: Եթե իսկապես Աստված է դարձի բերում մարդուն, ապա Նա շարունակում է գործել այդ մարդու մեջ՝ սովորեցնելով, օրհնելով, հորդորելով և խրատելով: Նա հետևում է, որ Իր սկսած գործն ավարտին հասնի: Ահա թե ինչու է հեղինակն ասում, որ առանց սրբության «ոչ ոք Տիրոջը չի տեսնի»: Ինչո՞ւ. որովհետև եթե չկա աճ սրբության մեջ, ապա Աստված չի գործում ձեր կյանքում: Իսկ եթե Նա չի գործում ձեր կյանքում, դրա պատճառն այն է, որ դուք Նրա զավակը չեք:

Տեսե՛ք Հակոբի և Եսավի տարբերությունը. «...Հակոբին սիրեցի և Եսավին ատեցի» (Հռոմ. 9.13): Այդուհանդերձ, Աստված երկուսի համար էլ կատարեց Իր խոստումները: Հակոբն օրհնված էր, Եսավը՝ նույնպես: Ինչպե՞ս Աստված ցույց տվեց Իր դատաստանն ու բարկությունը Եսավի նկատմամբ, իսկ սերը՝ Հակոբի նկատմամբ: Առաջինը՝ թույլ տվեց, որ երկուսն էլ վայրենանան: Սակայն Եսավի ներսում խրատական աշխատանք տեղի չէր ունենում, Աստծո հանդիմանությունը չէր գործում՝ ոչինչ չկար: Սա էր Աստծո բարկությունը նրա հանդեպ: Իսկ Հակոբին խստությամբ խրատում էր նրա կյանքի գրեթե բոլոր օրերում: Եվ սա Աստծո սիրո դրսևորումն էր նրա հանդեպ: Նրան սրբության մղեցին սիրով լի խրատը և Աստծո հանդիմանությունը: Նույնն այսօր վերաբերում է բոլոր հավատացյալներին:

Ավելին՝ Տերը Պողոսի միջոցով ասում է.

«Արդ, աղաչո՛ւմ եմ ձեզ, եղբայրնե՛ր, Աստծո ողորմությունով, որ ձեր մարմինները ներկայացնեք կենդանի, սուրբ և Աստծուն ընդունելի պատարագ, որ ձեր բանավոր պաշտոնն է: Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով. այլ՝ նորոգվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որ դուք քննեք, թե ինչ է Աստծո կամքը՝ բարին, հաճելին և կատարյալը» (Հռոմ. 12.1,2):

Ինչո՞ւ է ասում «ներկայացրե՛ք ձեր մարմինները»: Կարծում եմ՝ դրա պատճառը ներկա «գերհոգևոր լինելուց» խուսափելն է: Դուք ասում եք. «Ես սիրտս տվել եմ Հիսուսին. գիրքը կազմից չեն դատում: Չեք կարող իմ ներքին վիճակը դատել արտաքին գործերով»: Սակայն, իրականում, *կարող ես* գիրքը կազմով դատել: Հիսուսը երբևէ չի ասել, որ չեք կարող մարդու ներքին վիճակը դատել՝ նրա արտաքին գործերից ելնելով. ընդհակառակը՝ ասել է, որ կարող եք. ծառը պտղից կճանաչվի (տե՛ս Մատթ. 12.33):

Եթե կարծում եք, թե Քրիստոսին եք տվել ձեր սիրտը, ապա Նրանն է նաև ձեր մարմինը: Հիմա կասեմ, թե ինչու: Սիրտը, բարեկա՛մս, արյունամուղ մկան չէ, կամ՝ ինչ-որ բանաստեղծի երևակայության արգասիք: Աստվածաշնչում «սիրտ» բառը վերաբերում է մարդու բուն էությանը կամ միջուկին: Ուրեմն, մի՛ ասեք, թե ձեր բուն էությունը՝ միջուկը, Հիսուսն է, և դա ամբողջությամբ չի անդրադառնում ձեր մարմնի ու կյանքի վրա: Այդպես չի՛ լինում:

Մենք պետք է ուսումնասիրենք Աստծո Խոսքը՝ ո՛չ կրոնական ձևով, և ո՛չ էլ պարզապես ենթադրություններ անելով, այլ՝ հիմնվելով դրա հստակ կարգադրությունների վրա: Կարգադրություններ ինչի՞ վերաբերյալ. ո՞ր տեսակի կարգադրություններն են ուղղորդում մեզ:

Մաքրակրոնների ասած ամեն ինչին չէ, որ համաձայն եմ, սակայն սիրում եմ նրանց: Պատճառներից մեկը, թե ինչու եմ սիրում նրանց, այն է, որ հավատացած եմ՝ իրենց անկեղծությամբ փորձել են կյանքում ամեն բան ենթարկել Հիսուս Քրիստոսին՝ որպես Տիրոջ, այդ թվում նաև իրենց մտքերը: Նրանք ութ հարյուր էջից բաղկացած գրքեր են գրել այն մասին, թե ինչ պետք է մտածենք՝ ըստ Սուրբ Գրքի: Գրել են այն մասին, թե ինչ պետք է անենք մեր աչքերի հետ: Գրել են, թե ինչ պետք է մտնի մեր ականջներից, և ինչ չպետք է մտնի: Սովորեցրել են այն մասին՝ ինչպես պետք է կառավարել լեզուն: Խոսել են մեր կյանքերի ու դրա մանրուքների ամբողջական ուղղորդման մասին:

Գուցե վախեցնեմ ձեզ, սակայն Աստվածաշունչը խոսում է նաև այն մասին, թե ինչպես պետք է հագնվենք: Այս հարցում զգույշ եմ լինելու, քանի որ չեմ ցանկանում ենթադրություններ անել: Կինս ասում է. «Եթե հագուստն ընդգծում է ձեր դեմքի վայելչությունը, որից առկայծում է Քրիստոսի փառքը, ապա դա Աստծուց է: Իսկ եթե այն ընդգծում է ձեր մարմինը, ապա դա հեշտամոլություն է, և Աստված ատում է դա»: Աստծո բնությունը ուղղորդում է մեզ մեր վարքի բոլոր մանրուքներում:

Այս փոքրիկ գրքի նպատակը մեր սրբությանն առնչվող բոլոր բաներին անդրադառնալը չէ: Գիտենք, որ սրբությունը պարզապես արտաքին դրսևորում չէ: Այդուհանդերձ, մենք այնպիսին ենք դարձել, որ Հոգու ներքին աշխատանքը՝ որպես արդարացում օգտագործելով, ասում ենք, թե արտաքուստ ոչ մի բան էլ չպետք է տեղի ունենա: Սա ճշմարիտ չէ: Ձեզնից ոմանք գուցե աղաչեն, որպեսզի Աստծո Հոգին լցնի իրենց և գործի իրենց

միջոցով, սակայն բավական է կես ժամ հեռուստացույց դիտեն, որ տրտմեցնեն Նրան, և Նա իրենցից մղոններ հեռու լինի: Եթե ջրի իննսունինը տոկոսը մաքուր է, իսկ մեկ տոկոսը կոյուղաջրից է, ես այն չեմ խմի:

Մեկ անգամ դժվար իրավիճակում էի, և ընկերս այդ մասին հիշատակեց Լեոնարդ Ռեյվենհիլի հետ ունեցած իր զրույցի ընթացքում: Երբ վերջինս իմ ընկերոջից լսեց այդ իրավիճակի մասին, ինձ մի տրակտատ (դաշնագրություն) ուղարկեց: Մինչև այժմ էլ ունեմ այդ տրակտատը: Երբեք ու երբեք չեմ բաժանվի դրանից: Դրանում ասված է. «Ուրիշներին կարելի է, քեզ՝ ոչ»: Այդ տրակտատում գրված ամեն բանին չէ, որ համաձայն եմ, սակայն գիտեմ հետևյալը՝ կան վայրեր, որտեղ չեմ գնա, կան իրավիճակներ, որոնց մեջ ինձ չեմ գցի՝ ոչ այն պատճառով, որ ավելի սուրբ եմ, քան ուրիշները, այլ այն պատճառով, որ գիտեմ, թե ով եմ:

Գուցե իմանաք Եվրոպայի ամենահայտնի ջութակահարներից մեկի պատմությունը, ով իր վերջին համերգը տվեց տարեց հասակում: Երբ ավարտեց, մի երիտասարդ, ով նույնպես ջութակահար էր, մոտեցավ նրան ու ասաց. «Պարո՛ն, կյանքս կտայի, որպեսզի կարողանայի նվագել այնպես, ինչպես դուք եք նվագում»: Ծերունին պատասխանեց. «Որդի՛ս, ես իմ կյանքը տվել եմ, որպեսզի նվագեմ այնպես, ինչպես ես եմ նվագում»:

Դուք ասում եք. «Աստծո զորությունն եմ ուզում իմ կյանքում»: Իսկապե՞ս: Այդ դեպքում կան բաներ, որոնք պետք է թողնեք: Ասում եք. «Ուզում եմ ճանաչել Նրան»: Այդ դեպքում աշխարհից որոշակի զատում պետք է տեղի ունենա: Ամենուրեք բոլորն անձին հանգիստ տալու ինչ-որ միջոցներ են գտնում, հավաքվում են, խմբակա-

յին գրկախառնվում ու «Կումբայա» երգն[1] են երգում կամ նման մի բան: Իսկ ձեզ գուցե անհրաժեշտ է անապատում Աստծո հետ առանձնանալ, յոթ օր ծնկների վրա անցկացնել, ծոմ պահել, ուսումնասիրել Սաղմոսների գիրքը: Ձեզ անհրաժեշտ է Աստծո հետ միայնակ մնալ. դուք պետք է Նրան պատկանեք: Եթե Աստծո մարդ եք, ապա կլինեն ժամանակներ, երբ նույնիսկ ձեր կինը, ով ձեր մարմնից է, ձեզ հետ մեկ է, կնայի ձեր աչքերին ու կհասկանա, որ չի կարող ձեզ հետ միասին գնալ այն ծածուկ վայրը, ուր դուք գնում եք Աստծո հետ:

Այսօր մեր եկեղեցիներում լռում են աշխարհից զատվելու մասին: Սակայն Սուրբ Գիրքը չի լռում: Այն մեզնից պատասխան է պահանջում: «Անհավատների հետ այլախառն լծակից մի՛ եղեք. որովհետև ինչ մասնակցություն ունի արդարությունը անօրինության հետ» (Բ Կորնթ. 6.14). ո՛չ մի մասնակցություն: Ինչ մասնակցություն ունի լույսը խավարի հետ (խոսք 14). ո՛չ մի մասնակցություն: Խավարը Աստծո հայտնության հականիշն է: Ինչ միաբանություն ունի Քրիստոսը սատանաների հետ (խոսք 15). ո՛չ մի միաբանություն: Ինչ բաժին ունի հավատացյալն անհավատի հետ (խոսք 15). ո՛չ մի բաժին:

Տերն ասում է. «Նրանց միջից դո՛ւրս գնացեք» (խոսք 17): Ինչի՞ միջից դուրս գնացեք: Դո՛ւրս գնացեք անօրինությունից, խավարից, սատանայական գործիքներից և անհավատների կենսակերպից ու աշխարհականությունից. դո՛ւրս եկեք այս ամենից:

---

1 Աֆրիկյան երգ 1930-ական թվականներից՝ հայտնի է որպես ֆոլկլոր, որը տարածվեց երիտասարդական ճամբարներում և այս օրինակում գործածված է որպես մակերեսային կրոնի և հուզականության ներկայացում:

9

Ընտանիքին վերաբերող սուրբգրային համարների փոխարինում

«Զգո՛ւյշ կացեք՝ միգուցե մեկը հափշտակի ձեզ փիլիսոփայությունով և դատարկ խաբեբայությունով, մարդկանց ավանդության պես, աշխարհի սկզբունքների պես և ոչ թե Քրիստոսի պես»:

– Կողոսացիների 2.8

Իններորդ բանը, որը մտահոգվելու առիթ է տալիս, շատ կարևոր է ինձ համար՝ որպես հասուն տարիքի մարդու, ով ունի երիտասարդ ընտանիք: Ամուսնացել եմ երեսուն տարեկան հասակում: Մեր ամուսնության առաջին ութ տարիների ընթացքում կինս ուղեղի փոքր ուռուցք ուներ: Չէինք կարողանում երեխաներ ունենալ, սակայն որոշ ժամանակ անց, փա՛ռք Աստծուն, Նա հաճեց պարգևել մեզ երեխաներ:

Խորհե՛ք սրա շուրջ: Մեր կիրակնօրյա առավոտյան քարոզներն այնքան կոսմետիկ բնույթ են կրում: Միայն

այն, որ փառաբանությունը լավ է հնչում, քարոզը լավ է ընթանում, և թվում է, թե այն դիպչում է մարդկանց, իրական հոգևորության ապացույց չէ: Ես կասեմ, թե որն է դրա ապացույցը՝ տունը, ամուսնությունները, ընտանիքները: Աստվածաշնչում գրված է օրերի մասին, երբ «Իսրայելի մեջ թագավոր չկար. ամեն մարդ իր աչքերի հաճելի եղածն անում էր» (Դատ. 17.6): Ճամփորդելիս տարբեր մարդկանց եմ հանդիպում, սակայն փորձում եմ գտնել այնպիսի աստվածապաշտ մարդկանց, ովքեր մեծացրել են աստվածապաշտ երեխաների և շատ ժամանակ անցկացրել նրանց հետ: Սակայն ավելի հաճախ պարզվում է, որ մարդկանց մեծ մասն, ում հետ զրուցում եմ, ցանկանում է քննարկել սնոտիապաշտության, սոցիոլոգիայի և նմանատիպ բաների վերաբերյալ: Կենտրոնում այն է, ինչն իրենց ճիշտ է թվում, նույնիսկ մեկ սուրբգրային համար չեն կարողանում մեջբերել, որը կհիմնավորեր իրենց տեսանկյունը: Այդուհանդերձ, երբեմն հանդիպում եմ տղամարդկանց և կանանց, ովքեր իրենց ընտանիքներն Աստծո Խոսքի համեմատ կառուցելու որոշում ունեն: Տարբերությունը ցնցող է:

Պատահում է այնպես, որ օդանավում կողքիս նստած մարդիկ հարցնում են, թե ինչով եմ զբաղվում:

«Ամուսին եմ»,- պատասխանում եմ:

«Ուրիշ ինչով եք զբաղվում»,- հնչում է հաջորդ հարցը:

«Հայր եմ»:

«Իսկ ուրիշ ի՞նչ զբաղմունք ունեք»:

«Եթե ժամանակ է մնում, մի փոքր էլ քարոզում եմ»:

Ի՞նչ իմաստ կունենա այն, որ մարդն ամբողջ աշխարհը շահի, սակայն իր սեփական ընտանիքը կորցնի:

Թո՛ւյլ տվեք այսպես ձևակերպել միտքս. ի՞նչ հիմքի վրա եք մեծացնում ձեր երեխաներին և սիրում ձեր կնոջը: Ինչի՞ վրա է հիմնված ձեր ընտանիքը: Եթե չեք կարող բացել Աստծո Խոսքը և ցույց տալ, թե ինչպես եք ձեր ընտանիքը հիմնում դրա վրա, ապա կարող եմ գրեթե վստահ ասել, որ հոգեբանության, սոցիոլոգիայի և այս դարի քմահաճույքների ու ստերի գերին եք: Իրականում, իրավունք չունեք բոլոր այս բաներին հետևել: Ձեզ համար չպետք է լինի Աստծո Խոսքից զատ այլ հեղինակություն:

Տեսե՛ք, թե ինչ է գրված Ծննդոց 18.19-ում: Աստված Աբրահամի մասին ասում է. «Որովհետև Ես ճանաչեցի նրան, որ իր որդիներին և իրենից հետո իր տանը կպատվիրի, և նրանք Եհովայի ճանապարհը կպահեն՝ արդարություն և իրավունք անելու համար, որպեսզի Եհովան Աբրահամի վրա բերի՝ ինչ որ ասել է նրան»: Որքա՜ն գեղեցիկ է այս վարվելակերպը:

Խորհե՛ք նաև այն ամենի շուրջ, ինչ Պողոսն է ասում. «Արդ աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, Աստծո ողորմությունով, որ ձեր մարմինները ներկայացնեք կենդանի, սուրբ և Աստծուն ընդունելի պատարագ, որ ձեր բանավոր պաշտոնն է: Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով. այլ՝ նորոգվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որ դուք քննեք, թե ինչ է Աստծո կամքը՝ բարին, հաճելին և կատարյալը» (Հռոմ. 12.1,2): Երկրորդ խոսքում ասվում է, որ Աստծո կամքը կատարյալ է: Եթե որպես Աստծո մարդ դուք երբևէ ասեք, թե զոհաբերում եք ձեր ընտանիքը հանուն ծառայության, կասեմ ձեզ, որ ստում եք: Դուք ձեր ընտանիքը զոհաբերում եք հանուն այն փոքրիկ թագավորության, որը փորձում եք կառուցել: Կարող

եմ նման բան ասել, քանի որ Աստծո կամքը կատարյալ է: Սա նշանակում է, որ ծառայության վերաբերյալ Աստծո կամքը կատարելու համար ես ստիպված չեմ լինի խախտել Աստծո կամքն իմ ընտանիքի համար: Աստված ձեր կարիքը չունի: Այդուհանդերձ, Նա ձեզնից հնազանդություն է պահանջում:

Մի օր մի մարդ հարցրեց ինձ, թե արդյո՞ք դեմ եմ ավետարանչությանը: Ես պատասխանեցի. «Այո՛ և ո՛չ. դեմ չեմ աստվածաշնչյան ավետարանչությանը, սակայն դեմ եմ այն ձևին, որով դուք անում եք դա»: Նույն կերպ մեկ ուրիշը կարող է հարցնել. «Դուք դե՞մ եք կիրակնօրյա դպրոցին և երիտասարդական խմբակներին»: Իմ պատասխանը կրկին կլինի «այո» և «ոչ»:

Թո՛ւյլ տվեք երկու օրինակ բերել՝ բացատրելու, թե ինչ նկատի ունեմ: Գուցե ոմանց համար սրանք բավականաչափ համոզիչ օրինակներ չլինեն, իսկ ոմանց համար չափից կտրուկ լինեն: Այնուամենայնիվ, այս երկու օրինակով ցանկանում եմ ցույց տալ, թե ինչը մեզ հետ այն չէ:

Ինչ վերաբերում է կիրակնօրյա դպրոցին, անկախ այն բանից, թե ինչ հարանվանության եք պատկանում՝ եթե խոսքը մեծ ու կազմակերպված հարանվանության մասին է, կարող եմ վստահեցնել, որ մեծ քանակությամբ գումար է ծախսվում կիրակնօրյա դպրոցի նյութերի, ուսուցիչներին ուսուցանելու և գրքում տեղ գտած այլ բաների վրա, որ պետք է արվեն՝ դպրոցի առաջխաղացման համար:

Իսկ հիմա թո՛ւյլ տվեք հարցնել, թե որքան գումար է ծախսում ձեր հարանվանությունը, որքան աշխատաժամեր են ներդրվում, որքան համաժողովներ են անցկաց-

նում, որպեսզի հայրերին սովորեցնեն, թե ինչպես կրթեն իրենց երեխաներին: Աստված չունի ծրագիր Բ: Նա ունի միայն ծրագիր Ա: Եթե շրջանցեք ծրագիր Ա-ն, կտեսնեք, որ ծրագիր Բ-ն չի գործում:

Ասածս այն չէ, որ երեխաները չեն կարող խմբերով հավաքվել և կրթվել կամ ուսուցանվել, սակայն եթե դա փոխարինում է հոր ծառայությանը տանը, ապա անհրաժեշտ է անմիջապես շտկել այդ երևույթը:

Հասկանո՞ւմ եք՝ ինչ նկատի ունեմ: Պարզապես նայեք այս փոքրիկ օրինակին. կիրակնօրյա դպրոցի համար անհրաժեշտ ամեն բան կա, սակայն այնքան քիչ համաժողովներ են անցկացվում այս երկրում, որոնց նպատակն է սովորեցնել հայրերին, թե ինչպես պետք է սովորեցնեն իրենց երեխաներին: Իսկ կիրակնօրյա դպրոցը մեծ մասամբ ոչ ավելին է, քան ժամանց, քանի որ կիրակնօրյա դպրոցի ուսուցիչները երեխաներին ճշմարտապես խրատելու իշխանություն չունեն: Նույնիսկ եթե ունենային, չէին անի, քանի որ չեն հավատում դրա կարևորությանը:

Հիմա խոսենք երիտասարդական խմբակների մասին: Ինչ-որ մեկը կասի. «Երիտասարդները միասին լինելու կարիք ունեն: Նրանց պարզապես անհրաժեշտ է իրար հետ լինել»: Իսկապե՞ս: Սուրբգրային ո՞ր համարն է նման բան ասում: «Իմաստունների հետ վարվողը իմաստուն կդառնա. բայց տխմարների հետ ընկերացողը կչարանա» (Առակ. 13.20): Երիտասարդները պետք է հասուն տարիքի մարդկանց հետ ընկերակցեն, որպեսզի դադարեն միամիտ հիմարություններ անելուց և հասունանան՝ մի կողմ թողնելով հիմարությունը, որը կոր-

ծանման է տանում: Ասածս այն չէ, որ չի կարելի մեկտեղ հավաքել երիտասարդներին, այլ այն է, որ երբ անում եք դա, ծնողներին պատկերից դուրս մի՛ թողեք:

Միգուցե ասեք. «Իսկ այն մոլորված երիտասարդնե՞ր, ովքեր մեր եկեղեցի են հաճախում»: Ես էլ կհարցնեմ. «Ի՞նչ են նրանք հիմա տեսնում»: Այդ մոլորված երիտասարդները գալիս են ձեր եկեղեցու քրիստոնյա երիտասարդների մոտ և տեսնում են գրեթե նույն բանը, ինչ իրենց տներում՝ ծնողներ չկան. երեխաները սովորեցնում են երեխաներին: Կամ տարիքով մի փոքր ավելի մեծ տղան սովորեցնում է ուրիշների երեխաներին: Իսկ ի՞նչ տեղի կունենար, եթե մի մոլորված երիտասարդ գար ձեր եկեղեցի և տեսներ երեխաներին ու երիտասարդներին սիրով լի, հրաշալի հարաբերությունների մեջ իրենց ծնողների հետ: Նրանք կասեին. «Օ՜, նախկինում երբևէ նման բան չեմ տեսել: Ապա՛ նայեք այս հորը: Նա սիրում է իր որդուն: Իսկ որդին սիրում է հորը: Տեսե՛ք, թե ինչպիսի՜ սեր է: Ուրեմն *սա՞* է քրիստոնեությունը»:

Մեր եկեղեցիներում իրավիճակն ուշադրության կարիք ունի, սակայն մենք միտված ենք կույր լինել դրա նկատմամբ: Սա նման է մի մարդու, ում ճակատից արյուն է հոսում, ու նա գալիս է ինձ մոտ և ասում. «Ամենուրեք եղել եմ: Ոչ ոք չի կարողանում ախտորոշել խնդիրս», իսկ ես պատասխանում եմ. «Ես բժիշկ չեմ, սակայն քսանչորս ժամ քեզ հետ կլինեմ, որ փորձենք լուծում գտնել»: Արդյունքում տեսնում եմ, որ ամեն անգամ, երբ ժամը լրանում է, նա ինքն իր գլուխն աղյուսին է հարվածում: Երբ ժամը մեկն է զարկում, նա մեկ անգամ է գլուխը հարվածում: Երբ ժամը երկուսն է զարկում, երկու

անգամ է հարվածում: Ժամը տասներկուսին տասներկու անգամ է գլուխը հարվածում աղյուսին: Այս ամենին ուշադրությամբ և զգուշությամբ հետևելուց ու նշումներ անելուց հետո մոտենում եմ նրան ու ասում. «Գիտես՝ ես բժիշկ չեմ, սակայն կարծում եմ՝ հասկացել եմ, թե որն է քո խնդիրը»:

Մի՞թե մենք այդքան պաթետիկ վիճակում ենք: Ինչո՞ւ են մեր երեխաներն անում այն, ինչ անում են: Ինչո՞ւ է ամեն բան գլխիվայր շրջված: Մի թանկագին սուրբ եղբայր թույլ չի տվել, որ իր դեռահաս որդին առանձնացված վայրում ժամադրվի մի օրիորդի հետ: Եվ ինչ-որ մեկը նրան հարց է ուղղել. «Որդուդ չե՞ս վստահում», ինչին նա պատասխանել է. «Ո՛չ, չեմ վստահում որդուս: Չգիտեմ՝ ինչու այդ հարցը տվեցիք, սակայն իմացե՛ք, որ չեմ վստահում նույնիսկ նրա հորը: Ես նրա հորն էլ թույլ չէի տա առանձնանալ ինչ-որ կնոջ հետ, ով իր կինը չէ, որ թերևս ես անպատշաճ վարմունքից կորցնելու ավելի շատ բան ունեմ, քան որդիս, և սեփական կամքիս վրա ավելի մեծ իշխանություն ունեմ, քան մոլեգնող հորմոններով դեռահասը: Այս ամենով հանդերձ, ի՞նչն է ձեզ ստիպում մտածել, թե պիտի վստահեի որդուս այդ իրավիճակում»:

Մենք հաջորդաբար խախտում ենք աստվածաշնչյան սկզբունքները, իսկ հետո զարմանում ենք, թե ինչու է ամեն բան խառնաշփոթի վերածվել:

10

Աստծո Խոսքով թերսնված հովիվներ

«Ջա՛նք արա, որ քո անձն ընտիր կանգնեցնես Աստծո առջև իբրև մի մշակ՝ առանց ամոթի, որ ճշմարտության խոսքն ուղիղ մատակարարես»:

– Բ Տիմոթեոս 2.15

Մի քանի ամիս առաջ լսում էի բոլոր այն սարսափելի բաները, որոնք տեղի են ունենում մեր երկրում (այլևս չգիտեմ ինչպես կոչել այն՝ հանրապետական՞ն, ժողովրդավարակա՞ն, թե՞ սոցիալիստական երկիր): Այնպես էի բեռնավորվում այդ ամենը լսելուց: Ինքս ինձ ասում էի. «Օ՜, Աստվա՞ծ: Ի՞նչ կարող եմ անել: Հենց հիմա, Տե՛ր, այն ամենով, ինչ ներսումս կա, անկեղծությամբ պատրաստ եմ ցատկել հրդեհի մեջ: Եթե գազազած ռնգեղջյուր էլ լինի, կցատկեմ նրա առջև: Դու միայն ասա՛, թե ինչ անեմ: Կցանկանա՞ս գնամ Վաշինգտոն և Սպիտակ Տան առջև կանգնեմ ու այնքան քարոզեմ, մինչև ինձ բանտը նետեն: Ես հոգնել եմ լոկ քրիստոնյաներին քարոզելուց եկեղե-

ցիներում և համաժողովներին: Օ՜, Աստվա՜ծ, այս երկիրը դժոխք է գնում: Ի՞նչ ես ցանկանում, որ անեմ: Դու միայն նետի՛ր ինձ նրանց վրա»:

Այժմ խորհենք Ա Տիմոթեոս 4.1-16-ի շուրջ.

«Եվ Հոգին հայտնի ասում է, թե՝ հետին ժամանակներում ոմանք հավատքից կհեռանան և մտիկ կտան մոլար ոգիների և դևերի վարդապետությունների, ստախոսների կեղծավորությամբ, որոնց խղճմտանքը տաղված է. որ ամուսնանալուց կարգելեն, կհրաժարվեն կերակուրներից, որ Աստված ստեղծեց հավատացյալների և ճշմարտությունը ճանաչողների համար, որ գոհությամբ վայելեն: Որովհետև Աստծո բոլոր ստեղծվածները բարի են, և ոչ մի բան խոտան չէ. երբ որ գոհությունով ընդունվի: Որովհետև սրբվում է Աստծո Խոսքով և աղոթքով: Եթե այս բաները եղբայրներին խրատ տաս, Հիսուս Քրիստոսի բարի պաշտոնյա կլինես՝ սնված հավատքի խոսքերով և այն բարի վարդապետությունով, որին հետևեցիր: Եվ պիղծ ու պառավական առասպելներից ետ կաց. բայց վարժեցրո՛ւ քո անձը աստվածապաշտության: Որովհետև մարմնի վարժությունը քիչ բանի համար է օգտակար, բայց աստվածապաշտությունն ամեն բանի համար օգտակար է՝ ունենալով այժմյան և գալու կենաց խոստմունքը: Ճշմարիտ է այս խոսքը և ամեն ընդունելության արժանի: Որովհետև հենց սրա համար էլ աշխատում ենք և նախատվում, որ հույս ենք դրել կենդանի Աստծո վրա, որ Փրկիչ է բոլոր մարդկանց, և մանավանդ հավատացյալներին: Այս բաները պատվիրի՛ր և սովորեցրո՛ւ: Ոչ ոք քո մանկությունը չանարգի. այլ՝ օրինակ եղիր հավատացյալներին խոսքով, վարքով, սի-

> րով, հավատքով, սրբությունով: Մինչև որ գամ՝ միտք դիր կարդալուն, հորդորմունքին և վարդապետությանը: Անհոգ մի՛ եղիր այն քեզանում եղած շնորհքի համար, որ քեզ տրվեց մարգարեությունով երիցության ձեռնադրությամբ: Սրանք մտածի՛ր, սրանցում կա՛ց, որ քո առաջադիմությունը ամենին հայտնի լինի: Զգո՛ւյշ կաց անձիդ և վարդապետությանդ և դրանում հարատևի՛ր. որովհետև այդ անելով՝ քո անձն էլ կապրեցնես և քեզ լսողներիննն էլ»:

Առաջին խոսքում ասվում է. «Եվ Հոգին հայտնի ասում է, թե՝ հետին ժամանակներում ոմանք հավատքից կհեռանան և մտիկ կտան մոլար ոգիների և դևերի վարդապետությունների»: Այնուհետև Պողոսը շարունակում և ասում է երիտասարդ Տիմոթեոսին, որ մշակույթի մեջ ազատություն են ստանալու ամեն տեսակի կործանարար երևույթներ, և ամեն ինչ խելագարության է հասնելու, իսկ մարդիկ գազանների նման են պահելու իրենց: Կոնրադ Մբեվեն[1] ասել է. «Աֆրիկայում մենք այլևս չենք վախենում վայրի գազաններից: Մենք չենք փախչում վայրի գազաններից: Փոխարենը՝ վախենում ու փախչում ենք մարդկանցից»: Նա, իհարկե, խոսում էր մարդկության արմատական այլասերվածության հետևանքների մասին: Պողոսը պարզապես ասում է. «Տիմոթեո՛ս, աշխարհը սանձարձակվելու է»:

Ուրիշ ի՞նչ է ասում: «Եթե այս բաները եղբայրներին խրատ տաս, Հիսուս Քրիստոսի բարի պաշտոնյա կլինես՝ սնված հավատքի խոսքերով» (խոսք 6): Այո՛, աշ-

1 Զամբիայի, Լուսակա քաղաքում գտնվող Կաբվատա մկրտական եկեղեցու հովիվ

խարիը խելքը թռցրել է: Եվ Աստված մեզ ասում է. «Ամեն բան իմ նախախնամության ներքո է, սակայն լսե՛ք Ինձ: Այստեղ՝ երբ մեղքն ամենուրեք սանձազերծվում է, հավատուրացություն և հալածանք է տիրում, պետք է լինի ձեր արձագանքը: Եվ ահա թե ինչ պետք է անեք՝ շարունակաբար «սնվե՛ք հավատքի խոսքերով»»:

Փոխարենը մենք միշտ ցանկանում ենք վազել ու ինչ-որ բան անել: Ուզում ենք ինչ-որ բան շտկել: Իսկ Աստված փնտրում է տաշված բնավորությամբ մարդկանց՝ փայլեցված սրերի: Նախ և առաջ՝ շարունակաբար «սնված հավատքի խոսքերով և այն բարի վարդապետությունով, որին հետևեցիր»: «Որին հետևեցիր» արտահայտությունը շատ կարևոր է: Կարծում եմ, սա ցույց է տալիս, որ Սուրբ Գրքի լոկ մտավոր ուսումնասիրությունը չի հասցնի այն նպատակին, որն Աստված ունի Իր ժողովրդի համար: Աստծո ժողովուրդը պետք է հնազանդվի Աստծո Խոսքին, պետք է սկսի հետևել դրան: Չես կարող լավ տիրապետել վարդապետությանը, քանի դեռ չես հետևում դրան:

Այնուհետև Պողոսը կոչ է անում հրաժարվել «պիղծ ու պառավական առասպելներից» (խոսք 7): Եկեղեցու նոր առաջ եկող հարցերը, եկեղեցու աճին վերաբերող հարցերի մեծ մասը, զգայունությունը մշակույթի նկատմամբ, որը դեն է նետում զգայունությունն Աստծո Խոսքի նկատմամբ, այս ամենը այն բանի արդյունքն է, որ մի խումբ տղա երեխաներ ցանկանում են եկեղեցի-եկեղեցի խաղալ՝ առանց իրենց կյանքերում Աստծո զորությունն ունենալու, ինչպես Դավիթն էր փորձում տեղավորվել Սավուղի սաղավարտի մեջ: Որքան ավելի եք վստահում

մարմնականի ուժին, այնքան ավելի քիչ եք տեսնելու Աստծո զորությունը:

Պողոսը շարունակում է. «Վարժեցրո՛ւ քո անձը աստվածապաշտության» (խոսք 7), ասել է թե՝ ինքդ քեզ կարգուկանոնի հրավիրի՛ր աստվածապաշտության նպատակով: Աստծո՛ մարդ, արթնություն ուզո՞ւմ ես: Ես՝ նույնպես: Այդուհանդերձ, մեզ բանակ է հարկավոր: Եվ եթե մեր պայքարի համար Երկնքից նիզակներ, սրեր և այլ զինամթերք պետք է թափվի, ապա մենք պետք է դրանց տիրապետելու կարողություն ունեցող մարդիկ լինենք, ովքեր մարտը կվարեն առողջ բնավորությամբ: Մենք պետք է ինքներս մեզ կարգուկանոնի հրավիրենք՝ աստվածապաշտության նպատակով:

Կարգուկանոն մտցրե՛ք աղոթքի կյանքում: Կարգուկանոն մտցրե՛ք Սուրբ Գրքի ընթերցանության մեջ՝ Ծննդոցից մինչև Հայտնություն՝ կրկին ու կրկին: Կարգուկանոն մտցրե՛ք ձեր խոսքի մեջ: Կարգուկանոն մտցրե՛ք ձեր ընկերակցությունների մեջ: Կարգուկանոն մտցրե՛ք այն բանի մեջ, թե երբ եք քնում, և երբ եք արթնանում: Սա պատերազմ է. կարգուկանոնի՛ բերեք ինքներդ ձեզ:

Եթե երիտասարդ եք՝ երեսունը չբոլորած, նույնիսկ քառասունը չբոլորած, ապա ամենայն հավանականությամբ, ծնված լինելով այն դարում, որում ծնվել եք, դուք կարգապահության պակաս ունեք, իհարկե եթե բացառություն չեք, քանի որ ձեզնից հազվադեպ է պահանջվել իսկապես աշխատել: Դուք ստիպված չեք եղել աշխատել ձեր սննդի համար: Ձեր հայրերը հավանաբար չեն ստիպել ձեզ քրտնաջան աշխատել այնքան, որ ձեր ոսկորները ցավեն: Այն մարդիկ, ովքեր շատ բաներ են իրագոր-

ծել և գործածվել են Աստծո կողմից, ջանացող են եղել ծառայության մեջ: Արդյունավետ ծառայություն ունենալը բարդ բան է: Այն ձեզնից կպահանջի ամեն բան: Եվ մինչ հասնեք ծերության, դուք կոտրված կլինեք, սակայն ուժեղ՝ Աստծո գործերի մեջ:

«Վարժեցրո՛ւ քո անձը աստվածապաշտության: Որովհետև մարմնի վարժությունը քիչ բանի համար է օգտակար. բայց աստվածապաշտությունն ամեն բանի համար օգտակար է՝ ունենալով այժմյան և գալու կենաց խոստմունքը» (խոսքեր 7,8): Ո՞ւմ հոգն է «լավագույն կյանքը հիմա»: Ամբողջ հարցը հավիտենությունն է: Մեկ օր դուք կկանգնեք փառքի Տիրոջ առջև՝ այդ գրանիտե սրահներում, և աշխարհի թագավորներն ու մեծագույն մարդիկ կբաժանվեն, կառանձնացվեն և կզատվեն: Որոշները կնետվեն հավիտենական դժոխքը, իսկ որոշները կհրավիրվեն հավիտենական փառքի մեջ՝ հավիտենապես ապրելու: Որքա՜ն վեհապանծ են օլիմպիական չեմպիոնները, սակայն՝ ընդամենը մի ակնթարթ: Նրանց սկսում են մարզել չորս-հինգ տարեկանից: Մինչև քսաներկու տարեկան ոչինչ չեն անում՝ բացի մարզվելուց: Այնուհետև ինը վայրկյան տևողությամբ վազքի մրցման են մասնակցում մի շքանշանի համար, որը պատից են կախելու. ընդամենը այդքանը: Նրանց փառքի ակնթարթը շուտով անցյալի է վերածվում, և այն, ինչի համար նրանք ապրում էին, ավարտվում է: Մի՞թե չեք կարող սրան հավասար ջանք գործադրել հավիտենական բաների համար:

Աստծո մեծագույն մարդկանցից ոմանք սահմանափակված են եղել իրենց մարմնական կարողություններում: Նրանց կարողություններն այնքան սահմանափակ

են եղել, որ ստիպված են եղել մեկ բանի վրա կենտրոնանալ՝ նվիրվել են ծառայությանը: «Որովհետև մարմնի վարժությունը քիչ բանի համար է օգտակար... Ճշմարիտ է այս խոսքը և ամեն ընդունելության արժանի: Որովհետև հենց սրա համար էլ աշխատում ենք և նախատվում, որ հույս ենք դրել կենդանի Աստծո վրա» (խոսքեր 8-10): Սա պարզապես մարտիրոսանալ չէ՝ կյանքդ անարդյունավետ տալով ոչնչի համար և առանց հույսի փոշիանալով: Ո՛չ: Մենք ծառայում ենք Աստծուն, և Աստված կպատվի մեզ: Մենք մեր հույսը Նրա վրա ենք դնում, իսկ Նա մեզ ուժ է տալիս:

Այս կյանքը նման է գոլորշու: Երբ առաջին անգամ քարոզեցի այս քարոզը, քառասունյոթ տարեկան էի, մինչդեռ այնպիսի տպավորություն է, որ դեռ երեկ քսանմեկ տարեկան էի: Ո՞ւր գնացին տարիները: Կյանքը նման է գոլորշու: Քարոզե՛ք, քանի դեռ ուժ ունեք: Ես փառք եմ տալիս Աստծուն և Նրա նախախնամությանը, որ երիտասարդ տարիներս անցկացրել եմ Անդյան լեռներում և Պերուի ջունգլիներում՝ անելով այն, ինչի համար այս պահին այլևս ուժ չունեմ:

Քանի դեռ երիտասարդ եք, քանի դեռ ուժ ունեք, աշխատե՛ք ձեր ամբողջ զորությամբ: Վերցրե՛ք այդ հիմար վիդեոխաղերն ու ոտքի տակ տվե՛ք: Հեռուստացույցը պատուհանից դո՛ւրս նետեք: Դուք ստեղծվել եք ավելի մեծ բաների համար, քան դրանք են: Եթե դուք Թագավորի զավակ եք, ապա այս երկրի վրա ոչինչ չի կարող լիացնել ձեզ՝ ոչի՛նչ: «Այս բաները պատվիրի՛ր և սովորեցրո՛ւ» (խոսք 11):

Այնքան շատ բան կա այստեղ ամփոփված, ահա՛ թե

ինչ է ասվում 15-րդ խոսքում. «Սրա՛նք մտածիր, սրանցո՛ւմ կաց, որ քո առաջադիմությունը ամենին հայտնի լինի»: Պատկերացնենք, որ որդիս բաժակով ջուրը թափել է փայտյա սեղանին: Ըստ այն օրենքների, որոնք Աստված սահմանել է բնության մեջ՝ ջուրը մի փոքր հավաքվում է սեղանի վրա այնպես, որ ջրի ավազան է գոյանում: Անցնում եք դրա մոտով և ասում՝ սեղանին ջուր կա թափված: Դա բոլորի համար ակնհայտ է: Սակայն հետո գալիս եմ ես, սրբիչ վերցնում, դնում թափված ջրի վրա, այնուհետև բարձրացնում եմ սրբիչը, ինչի արդյունքում դուք այլևս ջուրը չեք տեսնի: Ի՞նչ եղավ այն: Ներծծվել է սրբիչի մեջ. մարդի՛կ, դուք պետք է սերտեք աստվածապաշտության և բնավորության աստվածաշնչյան սկզբունքները: Հովվի՛ներ, աղերսո՛ւմ եմ ձեզ. դուք մարդկանց հանձնարարությունները կատարող տղաներ չեք: Դուք չպետք է ձեր կյանքն անցկացնեք եկեղեցի հաճախող մարմնավոր մարդկանց քմահաճույքները բավարարելով: Մտե՛ք ձեր աշխատասենյակը: Խորությամբ կլանվե՛ք, այնպես տարվե՛ք Աստծուն ճանաչելով, որ մարդիկ ասեն. «Որտե՞ղ է նա: Նա միշտ շրջում էր քաղաքում և բոլորի հետ ընկերություն էր անում, այնքան մարդամոտ անձնավորություն էր: Որտե՞ղ է հիմա». նա կլանվել է այս բաներով:

Մենք Աստծո մարդիկ ենք: Մենք Բարձրյալի ծառայողներն ենք: Մենք պետք է «ուրիշ» լինենք: Մեր աչքերում դեպի հեռուն ուղղված հայացք պետք է լինի հեռավոր աստղին: Ամենամեծ բանը, որ կարող ենք անել մարդկանց համար, Աստծո մարդ լինելն է՝ կլանված Աստծո բաներով, որպեսզի երբ բացենք մեր բերանը, Աստծո Խոսքը դուրս գա:

Ես պատկանել եմ եկեղեցիների, որոնց հիմնական քարոզող հովիվները միշտ նվիրված են եղել Աստվածաշնչի ուսումնասիրությանը: Մի անգամ մի եկեղեցում, որին անդամակցում էի, առաջնորդների հետ զրուցում էի քարոզող հովվի մասին և հետևյալն ասացի. «Խնդրո՛ւմ եմ, որ անենք հետևյալը՝ որքան հնարավոր է թեթևացնենք այդ եղբոր բեռը, որպեսզի նա կարողանա իր աշխատասենյակում ապրել Աստծո հետ, քանի որ ես այստեղ երեխաներ ունեմ: Եվ ամենամեծ նվերը, որն այդ մարդը կարող է անել ինձ, ուսումնասիրությանը տրվելն է, իրեն ընդունելի դրսևորելը և ամբիոնի մոտ բարձրանալն ու Սուրբ Հոգու զորությամբ հռչակելն է. «Այսպե՛ս է ասում Տերը»՝ շտկելով, հանդիմանելով, մեծ խոստմունքներ և զգուշացումներ տալով. խնդրո՛ւմ եմ՝ արե՛ք դա ինձ համար»:

Հովի՛վ, խնդրո՛ւմ եմ, արե՛ք դա ձեր մարդկանց համար, ձեր ծառայողների համար, քանի որ Աստված ասում է. «Զգո՛ւյշ կաց անձիդ և վարդապետությանդ և դրանում հարատևի՛ր. որովհետև այդ անելով՝ քո անձն էլ կապրեցնես և քեզ լսողներիննն էլ» (Ա Տիմոթ. 4.16): Այսօր այս խոսքը գրեթե ոչ մի նշանակություն չունի ավետարանական շրջանակներում: Ի՞նչ եք կարծում՝ հովիվներից և քարոզիչներից քանի՞սն են լուրջ վերաբերվում դրան: Քանի՞սն են իրենք իրենց ասում. «Ես պետք է զգույշ լինեմ իմ անձի համար, որպեսզի պահեմ թե՛ իմ փրկությունը, թե՛ նրանց փրկությունը, ովքեր լսում են ինձ»:

Եթե հովիվ եք, ապա հարց ունեմ ձեզ. վերջին անգամ ե՞րբ եք քննել ձեր կյանքը՝ տեսնելու, թե արդյոք հավատքի մե՞ջ եք, արդյոք իսկապես ճանաչո՞ւմ եք Տիրոջը: Ես

ամուր հաստատություն եմ ստանում, երբ քննում եմ իմ դարձի գալը, քննարկում եմ այն ուրիշների հետ, նայում եմ քսանհինգ տարվա իմ ուխտագնացությանը Քրիստոսի հետ: Ամուր հաստատություն եմ ստանում, քանի որ Նրա ճանաչողությանն եմ եկել: Սակայն, նույնիսկ հիմա, եթե թողնեմ հավատքը, հեռանամ ու շարունակեմ քայլել դեպի հերձվածություն, դեպի աշխարհականություն, դա կլինի մեծագույն ապացույցներից, որ երբևէ չեմ ճանաչել Նրան, և այդ ամենը մարմնի գործ է եղել:

Գիտեմ, որ այն ինչ ասում եմ, շատերին ցնցում է: Գուցե մտածում եք՝ «Օ՜, երբեք նման բան չէի լսել», սակայն սա անժամանակավրեպ աստվածաշնչյան ճշմարտություն է, որը լսելու կարիք ունեք: Պարզապես ընթերցե՛ք *«Ուխտագնացի ճանապարհորդությունը»*[2]: «Զգո՛ւյշ կաց անձիդ և վարդապետությանդ և դրանում հարատևի՛ր. որովհետև այդ անելով՝ քո անձն էլ կապրեցնես և քեզ լսողներինն էլ»:

Թո՛ղ Աստված օրհնի Իր եկեղեցին:

---

2 Դասական այլաբանություն՝ հեղինակված Ջոն Բունյանի (1628-1688թթ.) կողմից, որում գլխավոր հերոսը՝ Քրիստիանը, ազատում է փնտրում օրենքի դրած մեղքի բեռից և ներում է գտնում Քրիստոսի խաչի մոտ: Այս աշխարհում նա բազմաթիվ փորձություններով է անցնում Երկնային քաղաքում հավիտենական կյանք տանող ճանապարհին: Ամեն շրջադարձին պարզում է, որ պետք է ապավինի Աստծո Խոսքին, որպեսզի այն պահի իրեն ուղիղ ու նեղ ճանապարհի վրա, որն Աստված նախասահմանել է իր համար: Այդ ճանապարհին նա հանդիպում է բազմաթիվ կեղծ պրոֆեսորների, ովքեր ևս սկզբում ուխտագնաց են թվում, սակայն նրանցից շատերը՝ բացի Հավատարիմից և Լիահույսից, թողնում և հեռանում են:

Ժամանակակից եկեղեցին արթնության կարիք ունի: Սակայն Փոլ Վոշերը՝ որպես հեղինակ, հետևյալ պնդումն է անում. «Մենք չենք կարող պարզապես անել այն, ինչը ճիշտ է թվում, և ակնկալել, որ Սուրբ Հոգին կգա ու կօրհնի մեր ջանքերը»: Ճշմարտությունն այն է, որ սատանան արթնության համար եկեղեցու աղոթքներին հակառակվելու շատ կարիք չունի, քանի դեռ Աստծո ժողովուրդը չի ձգտում ապրել և հավաքույթները կազմակերպել՝ ըստ Աստծո Խոսքի: Այս գրքում քննարկվում է տասը բնագավառի մասին, որոնցում եկեղեցիները անտեսել են հստակ աստվածաշնչյան ուղղորդումը և աղոթքով բարեկարգման ձգտելու կարիք ունեն:

«Եթե հին ասացվածքը, ըստ որի՝ ճիշտ ախտորոշումը բուժման կեսն է, ճշմարիտ է, ապա Փոլ Վոշերի այս գիրքն այսօր Քրիստոսի մարմնի հոգևոր առողջության համար խիստ անհրաժեշտ քննություն է: Ճշմարտությունը կարող է ցնցել, սակայն հավանականությունը մեծ է, որ ամենաշատը ցավեցնող ճշմարտությունն է բժշկություն բերում: Հենց այդպիսին են այս տասը գլուխները, որոնք դիպչում են ժամանակակից եկեղեցու բաց նյարդերին և կոտրված ոսկորներին: Այստեղ ներկայացված է ճիշտ գնահատումը այն ամենի, ինչը պետք է նորոգվի Քրիստոսի հարսի մեջ, եթե վերջինս ցանկանում է վերականգնել նախկին գեղեցկությունը»:
Սթիվեն Ջ. Լոուսոն, նախագահ, «OnePassion Ministries», Դալլաս, Տեխաս

ՓՈԼ ՎՈՇԵՐԸ տասը տարի ծառայել է Պերուի Հանրապետությունում՝ որպես միսիոներ: Այդ ընթացքում հիմնադրել է «HeartCry» Միսիոներական համայնքը՝ միտված օժանդակելու պերուացիներին, ովքեր եկեղեցիներ են հիմնում: Այժմ Փոլը «HeartCry» Միսիոներական համայնքի (heartcrymissionary.com) ծառայողներից է: Նա և կինը՝ Չարոն, ունեն չորս զավակ՝ Յանը, Էվանը, Ռոուենը և Բրոնվինը: